

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهرية  
تصدرها جمعية الهولمنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

Իր. ՏԱԻԻ, 2005, ԹԻԻ 10 (280) VOL. XXIV №10

السنة الرابعة والعشرون العدد العاشر

## Հ.Մ.Ը.Մ. ՇՈՒԷՏԻ ՄԷՋ



ՎԵՐՁԻՆ  
ՀՐԱԺԵՇՏ  
ԵՂԲ. ԿԱՐՕ  
ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆԻ



## ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչությունը կը գումե՛ իր անդամներէն, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական՝

### ԵՂԲ. ԿԱՐՕ

#### ԹԻԹԻԻՆՃԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 16 Յունուար 2006ին:

## ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Վարչությունը կը գումե՛ իր շրջանի վաստակաշատ եղբայրներէն՝

### ԵՂԲ. ԿԱՐՕ

#### ԹԻԹԻԻՆՃԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 16 Յունուար 2006ին:

## ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Մարգիկ» ամսաթերթը կը գումե՛ իր խմբագրական եւ վարչական աշխատանքներու երկար տարիներու պատասխանատու՝

### ԵՂԲ. ԿԱՐՕ

#### ԹԻԹԻԻՆՃԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 16 Յունուար 2006ին:

## ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Երջանային Վարչությունը կը գումե՛ հաւատարմոր Հ.Մ.Ը.Մ.ական՝

### ԵՂԲ. ԿԱՐՕ

#### ԹԻԹԻԻՆՃԵԱՆԻ

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 16 Յունուար 2006ին:

## «ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Եղբ. Կարօ Թիթիինճեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի «Մարգիկ»ին կատարուած են հետեւեալ անոնք:

- Տէր եւ տիկ. Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա) \$ 1,000
- Տէր եւ տիկ. Լեւոն Պաղտասարեան (Ֆրանսա) \$ 500
- Տէր եւ տիկ. Վահրամ Գանիէլեան (Մ. Նահանգներ) \$ 500
- Տէր եւ տիկ. Մհեր Գալիթեան (Մ. Նահանգներ) \$ 500
- Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի Մեկուսի վարչութիւն \$ 500
- Տէր եւ տիկ. Յարութիւն Յարութիւնեան (Հայաստան) \$ 200
- Տէր եւ տիկ. Սարգիս Տէր Պետրոսեան (Աւստրալիա) \$ 200
- Տէր եւ տիկ. Ժիրայր Սարգիսեան (Մ. Նահանգներ) \$ 200
- Յակոբ եւ Յարութիւն Պետրոսեան եղբայր (Քուէյթ) \$ 200
- Տէր եւ տիկ. Յովհաննէս Միհոյեան (Մոնթրէալ) \$ 100
- Տէր եւ տիկ. Յովհաննէս Մարտոյեան (Աւստրալիա) \$ 100
- Տէր եւ տիկ. Հրաչ Տէր Սարգիսեան (Գանատա) \$ 100
- Տէր եւ տիկին Գրիգոր Շուժուհեան \$ 100
- Տէր եւ տիկ. Յովհաննէս Տաղտէվիթեան եւ զաւակունք \$ 50
- Տէր եւ տիկ. Վարուժան Սերոբեան (Գանատա) \$ 50
- Տէր եւ տիկ. Գօգօ Գոյումճեան (Գանատա) \$ 50
- Տէր եւ տիկ. Վահէ Պէճօհանեան (Եգիպտոս) \$ 50
- Հ.Մ.Ը.Մ. Կամբ - Աղեքսանդրիոյ Մեկուսի վարչութիւն \$ 50
- Տէր եւ տիկ. Միհրան Երմէնեան \$ 50
- Տէր եւ տիկ. Մարտիկ եւ Թամար Խանճիհանեան \$ 50
- Տէր եւ տիկ. Պետրոս Ենմեսեան \$ 50
- Տէր եւ տիկ. Մանուկ եւ Քնար Քէօշկերեան \$ 20

- Տէր եւ տիկ. Տիրան Երմէնեան 135 զանաւակական տոլար

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի Մեկուսի վարչութիւն 100,000 լ. ռ.
- Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութիւն 100,000 լ. ռ.

- Եղբ. Գօգօ Մկրտիչեան 100,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Անդրանիկ Պէօյիքեան 50,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Գէորգ Թաղէոսեան 50,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Տիրան Ազնաւորեան 50,000 լ. ռ.
- ԼՕԽի «Նայիրի» մասնաճիւղի վարչութիւն 50,000 լ. ռ.
- Սագօ Արմէնեան 50,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Գէորգ Ալանեան 50,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Ծորճիկ Ռաստէլէնեան 50,000 լ. ռ.,
- Տէր եւ տիկ. Ալէք Խաչատուրեան (Լոնտոն) 50,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Ժագ Պոյաճեան 30,000 լ. ռ.
- Եղբ. Կարօ Երմէնեան (Հալէպ) 25,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Գարօ Սոմունճեան 20,000 լ. ռ.
- Տէր եւ տիկ. Յակոբ Էքմէքեան 15,000 լ. ռ.
- Տիկ. Սօսի Ապանեան 15,000 լ. ռ.
- Աւօ Խաչոյեան 10,000 լ. ռ.

- Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Երջանային Վարչութիւն 2,000 ա. ռ.
- Պերճ Սարգիսեան եւ Կարպիս Փոշուհեան (Հալէպ) 1,000 ա. ռ.
- Եղբ. Պօղոս Պալիոգեան (Հալէպ) 500 ա. ռ.
- Սեպուհ Գապագեան (Հալէպ) 500 ա. ռ.
- Յովսէփ Մանօ Տէր Մանուէլեան (Հալէպ) 500 ա. ռ.



# ԹԻՒՆԻՆ ՆԻՒՆԵՐՈՒ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزلیک مجله ریاضیه شهریه تصددها بجمعیة المومتمن الریاضی



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ  
 ԻԳ. ՏԱՐԻ, 2005, ԹԻՒ 10 (280)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզեն Առաքեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԳԱՄ  
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Արօ Մոսիկեան  
 Իշխան Եղիայեան  
 Գօգօ Մկրտիչեան

ԱՅՍ ԹԻՒԸ

Թղթակցություններու  
 առատութեան պատճառով, այս  
 թիւին դուրս կը մնան թերթին  
 ընթացիկ բաժիններու նիւթերը:

Էջադրում - Չարեհ Չօրէքճեան  
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ  
 Թիւ 65 Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmencentral.com  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատավաճառի սակն է 3000 լ.ն.:  
 Տարեկան բաժանորդագրութեան  
 սակ ճշդուած է 35000 լ.ն.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ



3

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԿՈՐՈՒՄՏԸ

- Փոխան Խմբագրականի 2
- Խօսք 3
- Անդրադարձ 5
- Յաւակցագիրներ 7



30



14

## Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Նոր Մասնաճիւղեր 12
- Ուղերձ 13
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 14
- Մեր Կորուստները 37

## ՅԱՁՈՐԳ ԹԻՒԻՆ ՄԷՋ

- Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին տասնաբանեան (Բ. մաս)
- Հ.Մ.Ը.Մ.ը Ջաւախքի մէջ
- Մարզական հոգեբանութիւն
- Թղթակցություններ Շուէտէն, Հայաստանէն եւ Սուրիայէն



ՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԿՆՈՂԻՆ ՃԱՄԲԱՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

# ՄԵԿՆՈՂԻՆ ՃԱՄԲԱՆ

(ԵՂՔ. ԿԱՐՕ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆԻ  
ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

**Մ**արդ երբ ողջ է՝ լրի տեսանելի չէ իր կերպարանքը: Հոգին կը խանգարէ եւ թոյլ չի տար ամէն բան յստակ տեսնելու:

Այս դիրուրթիւնը կ'ընծայէ մահը:

Մեռնողը ներկայ չունի, չունի մասնաւոր ապագայ: Ան միայն անցեալ է, յուշերու եւ յիշատակներու ամբողջութիւն:

Այս պարագան մեզ կը մղէ մեր հայեացքը բնապղաքար ետ դարձնելու եւ անելի որոշակի տեսնելու անդարձ մեկնողին ճամբան եւ իր հոգեկան պատկերը:

Մտածումներու այս լոյսը սփռեց եղբ. Կարօ Թիւթիւնճեան իր մահով, երբ անժամանակ կերպով հեռացաւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքէն, իր ետին ձգելով գաղափարապաշտ ու հաւատաւոր միութենականի բարի անուն:

Եղբ. Կարօ Հ.Մ.Ը.Մ.ը սիրեց ի տղայ տիոց: Դեռատի պատանի՝ ազգային առողջ ապրումներով անդամակցեցաւ անոր: Երիտասարդ, ապա լիովին հասուն, հաւատարիմ սպասարկուն եղաւ անոր, որովհետեւ անոր մէջ տեսաւ «ազգային կառոյց, նկարագիր եւ ձգտում»:

Երբ Հ.Մ.Ը.Մ.ի անդաստանը մուտք գործեց ան, իւրայատուկ բուռն հաւատքով ու անսպառ խանդավառութեամբ, տակաւին ներկայ էին մեծերը, ազգին փառքը հիւսած ընտիրները, որոնց բարոյական ու գաղափարական նկարագիրէն մեծապէս ներշնչուեցաւ ան:

Այնուհետեւ, կէս դար շարունակ, սկաւորական շարքերէ մինչեւ Կեդրոնական Վարչութեան քարտուղարութիւն, ան արժանաւոր պաշակներէն մէկը եղաւ «Նահատակ ցեղի անմահներ»-ու միութեան, զոհեց ժամանակը, հանգիստը, հաճոյքը. սպառեց ինք-

զինք, ու կատարեալ սպառում մը եղաւ բովանդակ կեանքը:

Բայց, իմաստ եւ արժէք մը տուաւ ան իր կեանքին:

Եղբ. Կարօ գրեց, խօսեցաւ ու գործեց սկաւորութիւն, մարզիկին ու վարչական պատասխանատուին համար հաւասարապէս: Մտքի եւ հոգիի կարգապահութիւն ստրվեցուց: Սիրտերը հպարտութեամբ եւ ազգային գիտակցութեամբ լեցուց: Շեշտօրէն մնաց հայ եւ գիտակցօրէն ապրեցաւ հայութեան իր պարծանքը: Իր գրութիւններով ան բնութագրումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի ազգային-գաղափարական արժէքներուն, լոյսին բերելով միութենական դաստիարակութեան ուսանելի օրինակներ:

Եղբ. Կարօ գովքը հիւսեց հերոսներու: Հ.Մ.Ը.Մ.ական հերոսներու, նպատակ ունենալով ցոյացնել «Միութեան դիւցապներգութիւնը՝ իր ապրումներով ու իտեպներով, իր ուխտով ու պայքարով, իր այն բոլոր նուաճումներով, որոնցմով ան կը մնայ ասպետական ոգիի ցուցանիշ միութիւն»:

Անմոռանալի պիտի մնան յատկապէս իր դասախօսութիւնները՝ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան մասին, որոնք զգացումներու եւ մտածումներու կայծեր արձակեցին շատ-շատերու:

Այսպէս, եղբ. Կարօ Թիւթիւնճեան եղաւ «ողն ու ծուծով» Հ.Մ.Ը.Մ.ական: Ազնուական, հեզ, հանդարտ: Իր սեփական խորհուրդներուն հետեւող: Մտածեց ու ապրեցաւ իր համոզումներուն համաձայն:

Լիբանանի ցուրտ հողը իր մէջ պիտի անփոփէ ինչ որ կորնչելի էր եղբ. Կարոյէն: Միւսը, անկորնչելին՝ գործն ու վաստակը պիտի մտնէ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւն:

Խոնարհութիւն իր քաղցր յիշատակին:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԿՈՐՈՒՍՏԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝  
ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՍԲԸ,  
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԵՂԲ. ԿԱՐՕ ԹԻԹԻԻՆՃԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ)

**Դ**

ժուար է գաղափարակից եղբայր մը կորսնցնելը, իսկ շատ անելի դժուար է գայն կորսնցնել ետք՝ հրաժեշտի խօսք արտասանելը: Տակաւին չենք հաշտուած ու երկար ժամանակ պետք է հաշտուելու համար եղբ. Կարօ Թիւթիւնեանի մահւան գաղափարին հետ:

Ի՞նչ ըսել աշխարհի տարածքին սփռուած այն բազմահազար սկաուտներուն, որոնք եղբ. Կարոյին սկաուտական երկար տարիներու իմաստութեան կարիքը ունէին:

Ի՞նչ ըսել Հ.Մ.Ը.Մ.Ի անելի քան 95 մասնահիւղերու մարզիկներուն, որոնք գրպանի գիրք ըրած էին եղբ. Կարոյին գրքոյկը՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ին:

Ու տակաւին, գոյժը ի՞նչպէս փոխանցել միութեան կազմակերպական կառոյցի այն բազմատասնեակ շրջաններուն, ուր եղբ. Կարոյէն հետք մը, յիշատակ մը կամ պատգամ մը կայ:

Հալեպէն մինչեւ Պէյրութ, Երեւանէն մինչեւ Յունաստան եւ Պուլկարիա, բոլորը կը սգան Հ.Մ.Ը.Մ.ի մեծ կորուստը: Կորուստը՝ «Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերոջ»,



որուն բովանդակ կեանքը եղաւ՝

- Սկաուտութեան համբով նորահաս սերունդներու դաստիարակութիւն:

- Հ.Մ.Ը.Մ.ի համբով հայութեան եւ Հայաստանին ծառայութիւն:

Եղբ. Կարօ, իր անձին օրինակով, տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի բնութագիրը տրւաւ միութեան: Խօսեցաւ այդ մասին: Գրեց յանախ: Մտերմական հանդիպումներու ընթացքին ընդվզեցաւ, որ օրէ օր կը հետանանք օրինակելիութեան չափանիշներէն:

Իր կեանքին 62 տարիներէն 50ը եղբ. Կարօ անցուց Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Պաշտամունքի աստիճան ան սիրեց միութիւնը, գործեց անշահախնդիր, լուռ ու անշուք, միշտ մեծ մնալով իր համեստութեան մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը եղբ. Կարոյին համար եղաւ մեր Տրդ հարստութիւնը: Իր բառերով՝ «Ան իշխանութիւն է առանց իշխանաւորի, թագաւորութիւն է առանց թագաւորի, կայսրութիւն է առանց կայսրի: Իշխած է աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ: 25 հազար հաշուող իր անդամներով կայսրութիւն չէ, բանակ չէ, հապա ի՞նչ է...»:

Ու դեռ, Հ.Մ.Ը.Մ.ը անելի՛ն եղաւ եղբ. Կարոյին համար: «Իր ապրումներով եւ խոհանրերով, իր ուխտով եւ պայքարով, ու իր բոլոր նուաճումներով, ասպետական ոգիի ցուցանիշ միութիւն» մը: Իսկ ինք, անկասկած, հանդիսացաւ այդ ոգիին լաւագոյն արտայայտիչներէն մէկը:

Եղբ. Կարօ Հ.Մ.Ը.Մ.ի կազմակերպական բուրգը բարձրացաւ աստիճան առ աստիճան, եւ իւրաքանչիւր աստիճանի հետ՝ որքան շտացան իր պատասխանատուութիւնները, այնքան անելի փարեցաւ իր գործին ու այնքան անելի կապուեցաւ այն արժեքներուն, որոնք միութիւն մը միութիւն կը դարձնեն, գաղափարական իր արժեքներով տոկուն, բարոյական իր սկզբունքներով պայծառ:

Հ.Մ.Ը.Մ.ին ան մաս կազմեց Հալեպի մէջ, գայլիկական եւ սկաուտական շարքերու համբով: Հասակ նետեց Հալեպի 1950ական տարիներու ազգային ոգեշնչող մթնոլորտին





**Զախին՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառին կողմէ, եղբ. Կարօ Թիւթունճեանը յետ մահու կը պարգևատրուէ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: Աջին՝ յուղարկաւորութեան ներկաները Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ:**

մէջ: Ներշնչուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ֆուլթոնի այդ օրուան կուռքերէն եւ իր ներշնչումը, դրուագներու եւ մտածումներու ձեւով, նորերուն փոխանցեց իր «Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը» գիրքով:

Ան ծանօթացաւ հայ կեանքի մեծերուն, ազդուեցաւ անոնցմէ եւ հետագային իր վկայութիւնները թուղթին յանձնեց «Հ.Մ.Ը.Մ. եւ ազգային մեծ դեմքեր» գիրքով:

Պէյրութ փոխադրուելով, 1966էն 1982, եղբ. Կարօ մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաւռտական Խորհուրդին, եղաւ անոր քարտուղարը, ապա՝ անոր ժրջանատեսնապետը: Ու պատմութեան համար կարելի է վկայել, որ ան եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկաւռտութեան փառքի օրերու կերտիչներէն մէկը, որուն համար 2003ին ան շքանշանի արժանացաւ Լիբանանի սկաւռտական ֆետերասիոնին կողմէ:

Կարգապահ աշխատանքի եւ խոնարհ ծառայութեան այս եղբայրը 1983ին կոչուեցաւ գերագոյն պարտականութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, որուն անդամ մնաց 16 տարի շարունակ՝ 1983-1999: 2003ին, չորս տարուան նոր շրջանի մը համար, ան ընտրուեցաւ Կեդրոնական Վարչութեան անդամ, առանց սակայն գիտնալու, թէ հակատագիրը այս անգամ ինչ նե՛նգ անակնկալ վերապահած էր իրեն:

Եղբ. Կարօ երախտաշատ աշխատանք կատարեց Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծման համար: Առաջիններէն եղաւ, որ փութաց հայրենիք եւ այլ եղբայրներու հետ միասին՝ սկաւռտական շարքերու կորիզներ յառաջացուց՝ գանազան սեմինարներու եւ բանակումներու կազմակերպման համբով: Եղաւ այն բախտաւորներէն, որ Համա-Հ.Մ.Ը.Մ.ական հիմնգերորդ բանակումին, Եռագոյնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը առաջին անգամ ըլլալով բարձրացուց Հայաստանի մէջ:

Կազմակերպչական «սեւ» աշխատանքի կողքին, եղբ. Կարօ կանուխէն ունեցաւ մտաւորական խմորումներ: Զանազան առիթներով ներկայացուց դասախօսութիւններ, աշխատակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ական մամուլին, գլխաւոր խմբագիրը եղաւ Լիբանանի Շրջանային Սկաւռտական Խորհուրդի «Հայ Սկաւռտ» թերթին, իսկ ամենէն ուշագրաւը՝ Կեդրոնական Վարչութեան «Մարգիկ» ամսաթերթի խմբագրական ու վարչական աշխատանքներուն իր մասնակցութիւնը բերաւ թերթին հիմնադրութենէն մինչեւ անակնկալ մահը:

Դժուար է եղբ. Կարոյին բոլոր աշխատանքներուն ներկայացումը կատարել այստեղ, հրաժեշտի այս տխուր պահուն, որովհետեւ այդ աշխատանքներուն կարեւոր մէկ մասը իր լրումին չէ հասած տակաւին: Այնքա՛ն շատ ծրագիրներ ունէր ան, ու այնքա՛ն խանդավառ պատրաստութիւններ կը տեսներ, որ կարելի է միայն ափսոսալ անժամանակ իր կորուստին համար:

Հիմա որ ան չկայ, ո՞վ պիտի հետապնդէ իր այնքան փայփայած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճրդ բանակումին ծրագիրը: Ո՞վ պիտի հետեւի Միջին Արեւելքի շրջաններու միջ-վարչական խորհրդաժողովի աշխատանքներուն: Ու տակաւին շատ ու շատ ծրագիրներ:

Սիրելի՛ եղբայր Կարօ, քու հրաժեշտովդ Հ.Մ.Ը.Մ.ը կը կորսնցնէ հաւատաւոր միութեանական մը, իսկ հայ ժողովուրդը՝ անձնագոհ գաւակ մը, որուն գիտակցական ամբողջ կեանքը եղաւ անսակարկ նուիրաբերում ազգային ընդհանրական արժեքներու եւ սրբութիւններու:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին կը խոնարհիմք վաստակիդ ու յիշատակիդ առջեւ եւ մենք մեզի թոյլ կու տանք անգամուան մը համար մեղանչել քու համեստութեանդ դէմ եւ, այն ինչ որ պիտի մերժէիր կենդանութեանդ, այժմ հանգիստ, սակայն տխուր սրտով քեզ պարգևատրել միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով:

# Հ.Մ.Ը.Մ. ԿԸ ՍԳԱՅ ԻՐ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ ԱՆԺԱՄԱՆԱԿ ՄԱՀԸ

**16** Յունևար 2006ին Հ.Մ.Ը.Մ. կորսնցուց արժանաւոր ներկայացուցիչներէն մէկը սերունդի մը, որ միութեան վերջին քառորդ դարու պատմութեան իւրայատուկ դրոշմ եւ դիմագիծ տուաւ, հետք ձգեց եւ ներշնչումի աղբիւր դարձաւ գալիք սերունդներուն: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարտուղար եղբ. Կարօ Թիւթիւնճեանի մահով միութիւնը կորսնցուց ոչ միայն իր գերագոյն մարմինն քարտուղարը, այլեւ հաւատաւոր ու երախտաշատ միութեանական մը, որուն 62 տարիներէն 50ը Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով անխոնջ նուիրաբերում եղաւ հայ ժողովուրդին եւ անոր ազգային իտէալներուն:

Եղբ. Կարօ Թիւթիւնճեան անժամանակ կերպով մահացաւ 16 Յունևար 2006ի առաւօտեան ժամը 1ին, ուղեղային կաթիլով պատճառով, խոր սուգի մատնելով Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, Լիբանանի Ազգային իշխանութիւնը եւ Հ.Յ.Դաշնակցութեան ընկերական իր լայն շրջանակը:

Եղբ. Կարօ ծնած էր Հալէպ, 1943ին: Ան Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական շարքերուն անդամակցած է 1956ին: Պէյրուսի փոխադրուելէ հետք, 1966-1982, ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Սկառուտ. Խորհուրդին, իբրեւ քարտուղար, ապա՝ ատենապետ: 1983ին ընտրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ այնուհետեւ վերընտրուած է երեք անգամ, մինչեւ 1999, 16 տարի ձեռնհասօրէն վարելով իր պաշտօնը: 2003ին, միութեան Տրդ Պատգամաւորական Ժողովին, չորս տարուան շրջանի մը համար ան դարձեալ ընտրուած է Կեդրոնական Վարչութեան անդամ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան երկար տարիներու իր անդամակցութեան բերումով, եղբ. Կարօ մասնակցած է շրջանային ու համա-Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ բանակումներու, սեմինարներու եւ ժողովներու: Հեզաբարոյ եւ ազնուական իր ներկայութեամբ, ան եղած է փնտռուած ժողովական ու յարգուած գործակից:

Հ.Մ.Ը.Մ.ը «միտով ու ոսկորով» ապրած եղբ. Կարօ կանուխէն ունեցած է մտաւորական նախասիրութիւններ: 1979-1980, ան գլխաւոր խմբագիրը եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Երջանային Սկառուտ. Խորհուրդի «Հայ Սկառուտ» թերթին: Այնուհետեւ, ան իր ներդրումը ունեցած է միութեան «Մարգրիկ» պաշտօնաթերթի խմբագրական եւ վարչական աշխատանքներուն: Հրատարակած է երկու գիրք. «Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութիւնը» եւ «Հ.Մ.Ը.Մ. եւ ազգային դէմքեր»: Ապրիլ 2005ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ իր խմբագրութեամբ լոյս տեսաւ «Հ.Մ.Ը.Մ. եւ Ապրիլ 24» գրքոյկը:

Լիբանանի սկառուտութեան վերելքին իր ունեցած մեծ նպաստին համար, 2003ին ան պարգեւատրուած է Լիբանանի սկառուտական Ֆետերասիոնին կողմէ:

## ՅՈՒՂԱՐԿԱՌՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

Եղբ. Կարօ Թիւթիւնճեանի յուղարկաւորութիւնն ու թաղումը արժանաւայել շուքով եւ Հ.Մ.Ը.Մ.ական պատիւներով կատարուեցան 17 Յունևար 2006ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ: Յուղարկաւորութեան հանդիսապետեց եւ յաւուր պատշաճի քարոզեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան: Այս առիթով Առաջնորդը անդրադարձաւ առաքինի մարդու, անշահախնդիր միութեանականի եւ հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականի անոր նկարագրային գիծերուն: Իր քարոզին աւարտին, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, ան եղբ. Կարօ Թիւթիւնճեանը յետ մահու պարգեւատրեց «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

Յուղարկաւորութեան ներկայ գտնուեցան Բերիոյ եւ Թեհրանի Ազգային Թեմերու Առաջնորդներ՝ Շահան Եպս. Սարգիսեան եւ Սեպուհ Արք. Սարգիսեան, պետական ու ազգային դէմքեր, Լիբանանի սկառուտական Ֆետերասիոնի ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Լիբանանի եւ Սուրիոյ Երջանային Վարչութիւններու, Երջանային Սկառուտ. Խորհուրդներու անդամներ եւ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ: Եկեղեցւոյ մուտքին եւ ներսը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի սկառուտական շարքերէն 125 քոյրեր եւ եղբայրներ վերջին յարգանքը ընծայեցին Կեդրոնական Վարչութեան իրենց եղբօր:

Յուղարկաւորութենէն հետք, թաղման կարգը տեղի ունեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մէջ, որուն մուտքէն մինչեւ մատուռ՝ եղբօր դազաղը ուսամբարձ տարին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամները: Մատրան մէջ, աղօթքներուն յաջորդեցին դամբանական խօսքերը:

Խօսքեր արտասանեցին տղթ. Սեպուհ Մանճեան՝ Լիբանանի Ազգային իշխանութեան անունով, Սարգիս Կիրակոսեան՝ Հ.Յ.Դ. «Աղբալեան» կոմիտէին անունով եւ եղբ. Գառնիկ Մկրտիչեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով:

Տղթ. Մանճեան իր խօսքին մէջ ներկայացուց եղբ. Կարօ Թիւթիւնճեանի շուրջ 40 տարուան ծառայութիւնը Լիբանանի Ազգային Առաջնորդարանին, իբրեւ Ազգային վարժարաններու պետական գործերու պատասխանատու: Ան անդրա-

դարձաւ պարտաճանաչ, լուռ եւ համեստ եղբոր արժանիքներուն, յայտնելով թէ իր անժամանակ մեկնումով մեծ բաց մը կը ձգէ ան իր ետին:

**Սարգիս Կիրակոսեան, իր կարգին, խօսեցաւ եղբ. Թիւթիւնճեանի Դաշնակցականի կազմաւորումին եւ վաստակին մասին:** Ան ըսաւ, որ եղբ. Կարօ եղաւ «Անձնամոռ եւ համակ հաւատք ու նուիրում ազնուական ներկայութիւն մը, որ Հալեպի Ուսումնասիրաց վարժարանի եւ Ազգ. Քառէն Եփփէ Ճեմարանի գրասեղաններուն վրայ հայեցի առողջ դաստիարակութիւն եւ ազգային նկարագիր ու ոգի ստանալէ առաջ, աչքերը լոյսին եւ լուսանանձն վաւերական արժեքներուն բացաւ հայակերտման անզուգական դպրոց ու դարբնոց՝ Հ.Մ.Ը.Մ.ի երդիքին տակ, սկառուական շարքերէն բացուեցաւ հայոց պատմութեան վերջին 100ամեակի խիզախումներուն ու յաղթանակներուն հետ նոյնացած Հ.Յ.Դաշնակցութեան անհուն հորիզոններուն, անսաց իր արեան կանչին, «Նահատակ ցեղի անմահներ»ուն անմահ հրաւերներուն, ուխտեց, գործեց եւ կենսագործեց կեանք մը ամբողջ, մեր յաւերժ պաշտելի գաղափարի սուրբերուն հրեղէն կեանքին կենդանի օրինակով, անանձնական երջանկութեամբ, լուռ հաւատարմութեամբ»:

**Վերջապէս, եղբ. Կարոյի վաստակաշատ ծառայութիւններուն ու գաղափարական աւանդին մասին խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ**

**Մկրտիչեան:** Ան ըսաւ, որ դեռ երկար ժամանակ պէտք է հաշուելու համար եղբոր մահուան գաղափարին հետ: «Եղբ. Կարօ, իր անձին օրինակով, տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի բնութագիրը տուաւ միութեան: Խօսեցաւ այդ մասին: Գրեց յանախ: Մտերմական հանդիպումներու ընթացքին ընդվզեցաւ, որ օրէ օր կը հեռանանք օրինակելիութեան չափանիշներէն:

«Իր կեանքին 62 տարիներէն 50ը եղբ. Կարօ անցուց Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Պաշտամունքի աստիճան ան սիրեց միութիւնը, գործեց անշահախնդիր, լուռ ու անշուք, միշտ մեծ մնալով իր համեստութեան մէջ», **չեչտեց եղբ. Մկրտիչեան եւ իր խօսքին աւարտին, յանուն Կեդրոնական Վարչութեան, յետ մահու եղբ. Կարօ Թիւթիւնճեանը պարգաւատրեց «Արժանեաց» շքանշանով (Եղբոր խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 3-4):**

**Հուսիկ, եղբոր դաճաղը ուսամբարձ փոխադրուեցաւ իր ընտանեկան դամբարանը, ուր Հ.Մ.Ը.Մ.ի շէփորախումբը իր վերջին պատիւը ընծայեց «Յառաջ նահատակ» քայլերգով, մինչ սկառուներ «Պատուի առ»ով, իսկ ներկաներ լուռ եւ արտասուելից աչքերով հրաժեշտ տուին եղբ. Կարոյին, անոր գործն ու յիշատակը երախտապարտութեամբ յիշելու խոստումով:**

(Եղբոր յիշատակին եւ վաստակին տակաւին կ'անդրադառնանք):

**FREDDY KARAGEUZIAN**

**"ONNIG OF CAIRO"**

**Egyptian Museum**

**Tahrir Square - Cairo**

**Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net**



# ՑԱՒԱԿՑԱԳԻՐՆԵՐ

Խոր ցաւով իմացանք նուիրեալ ազգային եւ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական՝ Կարօ Թիւթիւնճեանի մահուան գոյժը:

Յանուն Մեր եւ Բերիոյ Թեմի Ազգ. իշխանութեան, մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին տիկնոջ, հարազատներուն եւ ընկերներուն:

Թող Աստուած Սուրբ Հոգիով մխիթարէ Ձեզ եւ երկնքի արքայութեան արժանացնէ Կարօ Թիւթիւնճեանը:

Աղօթարար՝  
**ՇԱՀԱՆ ԵՊՍ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**  
**ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՅՈՑ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻ**

\*\*\*

Խոր ցաւով իմացանք եղբայր Կարօ Թիւթիւնճեանի մահուան գոյժը: Հայ Օգնութեան Միութիւնը կը մասնակցի անոր կորուստին պատճառած սուգին: Նուիրեալ ու վաստակաւոր ընկերոջ անվերադարձ մեկնումը այս անցաւոր աշխարհէն՝ կորուստ մըն է համայն հայութեան համար:

Այս տխուր առիթով, հաճեցէք ընդունիլ ՀՕՄԻ Կեդրոնական Վարչութեան եւ անոր գրասենեակի պաշտօնէութեան խորին ցաւակցութիւնները, որ կը խնդրենք փոխանցել հանգուցեալ եղբոր հարազատներուն, ընկերներուն ու բարեկամներուն:

Եղբայրական բարեւերով՝  
**ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ**  
**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Խոր ցաւով ստացանք Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ՝ Կարօ Թիւթիւնճեանի անակնկալ մահուան լուրը, որը ցնցեց ու սուգի մատնեց նաեւ մեզ եւ կազմակերպութեանս բոլոր անդամներին:

Այս անփոխարինելի կորստի կապակցութեամբ, յայտնում ենք մեր խորագգաց վշտակցութիւններն ու ցաւակցութիւնները Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր անդամներին, Լիբանանի հայ համայնքին, Թիւթիւնճեան ընտանիքին եւ հարազատներին, մաղթելով հանգուցեալին երկնային արքայութիւն եւ դեռ ապրողներ իս անսպառ համբերութիւն:

**ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԱՐԱՏ**  
**ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Մեզ հասաւ եղբ. Կարօ Թիւթիւնճեանի վաղաժամ մահուան գոյժը:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Կենտրոնական Վարչութիւնը յայտ-



նում է իր խորին ցաւակցութիւնը եղբ. Կարօյի հարազատներին եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի  
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարօ Թիւթիւնճեանի անակնկալ մահուան տխուր առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութիւնը, Շրջանային յանձնախումբերն ու 18 մասնաճիւղերու անդամ - անդամուհիները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, հանգուցեալին այրին, ընտանեկան պարագաներուն եւ համայն հարազատներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ  
**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Սրտի անհուն կսկիծով իմացանք մահուան գոյժը մեր շատ սիրեցեալ Կեղրոնական Վարչութեան անդամ՝ եղբ. Կարո Թիւթիւնճեանի:

Յանուն Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ բոլոր անդամներուն, կու գանք մեր խորին ցաւակցութիւնները յայտնելու ձեզի եւ ողբացեալին բոլոր հարազատներուն, եւ մասնակից դառնալու ձեր վիշտին:

Կը մաղթենք որ Աստուած ննջեցեալին հոգին լուսաւորէ եւ իր սիրելիներուն մխիթարութիւն պարգեւէ:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը իր բոլոր մասնաճիւղերով եւ անդամներով իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Կեղրոնական Վարչութեան եւ հանգուցեալին ընտանեկան պարագաներուն՝ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Կարո Թիւթիւնճեանի մահուան առիթով:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ՅՈՒՆԱՏԱՅԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը մեծ կսկիծով ստացաւ եղբ. Կարո Թիւթիւնճեանի մահուան տիտղոս լուրը:

Թէեւ իբրեւ քրիստոնեայ պէտք է հաւատանք, որ մահը կեանքի շարունակութիւնն է, սակայն դժուար է ընդունիլ, որ ան այս աշխարհէն մեկնած է:

Եղբ. Կարո Թիւթիւնճեանը անմահ պիտի մնայ մեր ու բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու սրտերուն մէջ:

Տէրը իր Սուրբ Հոգիով մխիթարէ Ձեզ, հանգուցեալին հոգին լուսաւորէ եւ արժանացնէ յաւիտեանական կեանքի:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՎԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան անունով կու գանք մեր խորին ցաւակցութիւնները յայտնելու շատ անսպասելի եւ անակնկալ այս տիտղոս լուրին առթիւ: Հ.Մ.Ը.Մ.ը կորնցուց շատ վաստակաւոր եւ յարգելի եղբ. Կարոն: Աստուած հոգին լուսաւորէ եւ մխիթարանք տայ իր ընտանիքին եւ բոլոր հարազատներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեղրոնական Վարչութեան նոյնպէս կը փոխանցենք մեր խորին ցաւակցութիւնը: Եղբ. Կարոյին մահը մեծ կորուստ եղաւ Հ.Մ.Ը.Մ.Ի ընտանիքին:

Եղբ. Կարոն մեր բոլորին մտքին ու սրտին մէջ պիտի մնայ յաւիտեան:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՒՍՏՐԱԼԻՈՅ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Խոր ցաւով ու անհուն վիշտով իմացանք շատ սիրելի եւ յարգելի եղբայր Կարո Թիւթիւնճեանի մահուան լուրը:

Հ.Մ.Ը.Մ.Ի համայն ընտանիքը կը կորսնցնէ թանկագին եղբայր, ազգային, մտաւորական, գաղափարապաշտ եւ տիրպար հայորդի մը:

Սոյն գիրով կը յայտնենք ձեզ եւ ձեր միջոցով Թիւթիւնճեան ընտանիքին մեր խորագգաց վշտակցութիւնը:

Հանգիստ իր աճիւններուն: Թող հողը թեթեւ ըլլայ վրան:  
**Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի-Ֆրանսի Մեկուսի վարչութիւնը սրտի խոր վիշտով իմացաւ մահուան գոյժը վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, Կեղրոնական Վարչութեան անդամ՝ եղբ. Կարո Թիւթիւնճեանի:

Հ.Մ.Ը.Մ.Ի-Ֆրանսի Մեկուսի վարչութիւնն ու անդամները իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն Հ.Մ.Ը.Մ.Ի Կեղրոնական Վարչութեան:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՐԱՆՍԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի Լոնտոնի Մեկուսի վարչութիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ եղբ. Թիւթիւնճեանի ընտանիքին, բարեկամներին, հարազատներին եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներին:

Շատ մեծ կորուստ է այս բոլորիս համար:  
**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.Ի Ալմբրոյի Մեկուսի վարչութիւնն ու մասնաճիւղի անդամները խոր վիշտով կը ցաւակցին եղբ. Կարո Թիւթիւնճեանի մահուան: Վաստակաշատ եղբոր մահը Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին համար մեծ ցաւ է, ուստի կ'արղթենք առ Աստուած, որ իր հոգին արժանացնէ երկնային արքայութեան:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱԼՄԵՐՈՅԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Մեծ ցաւով եւ ափսոսանքով ստացանք եղբ. Կարո Թիւթիւնճեանի մահուան լուրը, որ խոր վիշտ պատճառեց մեր բոլորին: Այս երկտողով գալիս ենք մեր խորին ցաւակցութիւնները յայտնելու նախ իր հարազատներին, բարեկամներին, Կեղրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին: Կորուստը շատ մեծ եւ անփոխարինելի է:

Իր յիշատակը միշտ վառ պիտի մնայ մեր բոլորի սրտերում:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ի Շուշուի Մեկուսի վարչությունը իր խորին ցա-  
լակցութիւնը կը փոխանցէ եղբ. Կարօ Թիւթիւնճեանի մահ-  
ւան առիթով՝ իր պարագաներուն եւ բովանդակ Հ.Մ.Ը.Մ.ա-  
կաններուն:

Հ.Մ.Ը.Մ.ի ՇՈՒՒՏԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Խոր ցաւով ստացանք տխուր լուրը՝ եղբ. Կարօ Թիւթիւնճե-  
անի մահուան: Կիպրոսի բոլոր եղբայրները կը ցաւակցին ձե-  
զի եւ իր ընտանիքին:

Հողը թեթեւ գայ վաստակաշատ եղբօր վրայ:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ե.Մ.ի ԿԻՊՐՈՍԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի Մեկուսի մասնաճիւղի վարչութիւնը  
իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ եղբ. Թիւթիւնճեա-  
նի ընտանիքին, բարեկամներուն, հարազատներուն եւ բոլոր  
Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Շատ մեծ կորուստ է այս բոլորիս համար:

Հ.Մ.Ը.Մ.ի ՔՈՒՒՅՅԹԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Սրտի անհուն կսկիծով իմացանք մեր բոլորին շատ սիրելի  
եւ նոյնքան յարգելի Կեղրոնական Վարչութեան ատենադպիր  
եղբ. Կարօ Թիւթիւնճեանի անակնկալ եւ ցաւալի մահուան  
գոյժը:

Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի վարչութեան եւ բոլոր անդամներուն  
կողմէ մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք նախ  
հանգուցեալին անմիջական ընտանիքին, ապա՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
Կեղրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Շատ մեծ է բոլորիս կորուստը: Աստուած հոգին լուսաւո-  
րէ, համբերութիւն եւ երկար կեանք պարգեւէ իր բոլոր պա-  
րագաներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի ԱՄՄԱՆԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Խոր վիշտով տեղեկացանք անակնկալ եւ անժամանակ մա-  
հը սիրելի եղբ. Կարօ Թիւթիւնճեանին:

Յանուն Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան  
անդամներուն, մարզիկներուն եւ սկաւտական կազմին,  
կու գանք մեր խորին վշտակցութիւնները յայտնելու ողբաց-  
եալ վաստակաշատ եղբօր վշտահար կնոջ, ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի  
մեծ ընտանիքին:

Յարգանք եղբօր վաստակաշատ յիշատակին:

Հ.Մ.Ը.Մ.-«ԱՐԱՐԱՏ»Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Յաւով իմացանք եղբ. Կարօ Թիւթիւնճեանի մահուան լուրը:



Յանուն Ադեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղին,  
մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք եղբ. Կարօ Թիւ-  
թիւնճեանի ընտանիքին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչու-  
թեան եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Կորուստը մեծ է, բայց Աստուծոյ կամքն է:

Աստուած հոգին լուսաւորէ:

Հ.Մ.Ը.Մ.- «ԿԱՄՔ»Ի ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Սրտի խոր կսկիծով լսեցինք եղբ. Կարօ Թիւթիւնճեանի  
մահուան գոյժը, որ խոր ցնցում պատճառեց մեզի: Կորուստը  
շատ մեծ է, ահաւոր է: Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը կորսնցուց  
իր սիւներէն մէկը՝ Կեղրոնական Վարչութեան քարտուղարը  
եւ սկաւտութեան պատասխանատուն:

Եղբ. Կարոն եղած է Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսներէն,  
պատանիներու ոգեւորիչը եւ ուժ սերշնչողը: Բայց ակա՛ղ, այ-  
լեւս ոչ եւս է ան:

Ընդունեցէք մեր բոլորին ցաւակցութիւնը եւ աղօթքները,  
որպէսզի հանգուցեալը արժանանայ Տիրոջ Արքայութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի ՊԱՂՏԱՏԻ  
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

\*\*\*

Անժամանակ մահը մեզանից խլեց մեր Կարոյին: Դժուար է  
հաւատալ, որ Կարոն այլեւս չկայ: Դժուար է հաւատալ, որ էլ  
չենք վաշեելու նրա ներկայութիւնը: Դժուար է հաւատալ, որ  
մեր մեծ ընտանիքում այլեւս Կարոյին յիշելու ենք անցեալի  
ժամանակով եւ շատ դժուար է, որ ստիպուած ենք լինելու  
մեզ սփոփելու համար յաճախ կրկնել՝ Աստուած հոգին լու-  
սաւորի:

Իմ եւ իմ ընտանիքի կողմից ցաւակցում եմ մեր մեծ ընտա-  
նիքին, Կարոյի ընտանիքին ու ազգականներին՝ սիրելի եղբօր  
անժամանակ մահուան առիթով:

Աստուած հոգին լուսաւորի:

Երեսան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ



Հոկտեմբեր 2005, եղբ. Կարո Թիթիսյանի ՏԷՐ Զօրի մէջ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան պատգամը կը փոխանցէ Եղեռնի 90ամեակի ուխտագնացութեան:

\*\*\*

Խոր կսկիծով եւ անհուն ցաւով տեղեկացանք վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Կարո Թիթիսյանի մահուան տխուր լուրը:

Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը սուգի մէջ է եւ կ'ողբայ իր արժանաւոր գաւակներէն մէկուն դառն կորուստը:

Եղբ. Կարոյին յիշատակը վառ պիտի մնայ մեր սրտերուն եւ հոգիներուն մէջ, իբրեւ ազնիւ մարդ, հայրենասիրութեան մարմնացում եւ օրինակելի միութենական:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի 5 մասնաճիւղերու վարչութիւններուն եւ խորհուրդներուն, Շրջանային Վարչութեան, 1600 անդամներուն եւ իմ անունովս ընդունեցէք մեր խորագրաց ցաւակցութիւնները:

Աստուած հոգին լուսաւորէ:

Մոնթրէալ

**ՀՐԱԶ ՏԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ**

\*\*\*

Սրտի դառն կսկիծով իմացանք մեր շատ սիրելի եղբ. Կարոյին անակնկալ մահը:

Կը փոխանցեմ իմ եւ ընտանիքիս խորագրաց ցաւակցութիւնները ձեզի, քոյր Թիթիսյաններին, եղբ. Կարոյի ընտանեկան պարագաներուն, ընկերներուն եւ բարեկամներուն:

Եղբ. Կարոն եղաւ իսկապէս տիպար եւ կատարեալ Հ.Մ.Ը.Մ.ական մը: Մեր միութեան տուաւ իր լաւագոյնը եւ սատարեց

անոր վերելքին, ըլլայ սկառուական կամ կազմակերպչական իր փորձառութեամբ:

Աստուած լուսաւորէ անոր հոգին եւ մեզի ուժ եւ կորով տայ՝ շարունակելու մեր աշխատանքը:

Հողը թեթեւ դայ վրադ եղբ. Կարո:

Լոս Անջելես

**ՄՀԵՐ ԴԱԻԹԵԱՆ**

\*\*\*

Սրտի խոր կսկիծով իմացայ լուրը եղբ. Կարոյի մահուան: Ան զիս տպաւորած էր իր մաքուր եւ անկեղծ նկարագիրով: Իր կորուստը մեծ է մեր կազմակերպութեան համար: Մեր ընտանիքին խորին ցաւակցութիւնները իր տիկնոջ եւ ընտանիքին, ինչպէս նաեւ մեր Կեդրոնական Վարչութեան բոլոր անդամներուն:

Հողը թող թեթեւ ըլլայ իր վրայ:

Ֆլորիսա

**ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆ**

\*\*\*

Յաւով ստացայ եղբ. Կարո Թիթիսյանի մահուան լուրը: Ցաւակցութիւններս իր տիկնոջ՝ Արփի Թիթիսյանին եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ:

Պուէնոս Այրէս

**ԱԲՐԱՀԱՄ ԱՀԱՐՈՆԵԱՆ**

\*\*\*

Կը ցաւակցինք քոյր Արփիին, եղբ. Կարոյին ընտանիքին, պարագաներուն, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին բոլոր անդամներուն:

Փարիզ

**ԼԵՒՈՆ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ**

\*\*\*

Քիչ պիտի ըլլայ հաստատել, որ եղբ. Կարոյին մահուան



1960ականներու սկիզբ. սկաուտ եղբ. Կարո Թիթիսյանի յաղթաբայլ կը տողանցէ Հալէպի մէջ:

գոյժը անակնկալ էր, եւ որպէս այդպիսին՝ քիչ մը շշմեցուցիչ: Արդար պիտի չըլլար ցաւակցիլ ձեզի եւ վշտակցութիւններու արտայայտութիւններով գոհանալ:

Հ.Մ.Ը.Մ.ի գանազան մակարդակի կառուցներուն մէջ (Լիբանանի Շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւններու) տասնամեակներու գործակցութիւնը առիթը տուած էր ինծի ճանչնալու եղբ. Կարոն, գնահատել իր միութենական փորձառութիւնները, մտաւորական հակումները եւ եղբայրութենէ անդին ու անոր համագործակցութեամբ յարաբերիլ իրեն հետ:

Կարոյին ազգային ու միութենական կեանքը ներկայացնելու համար, շատ բան կարելի է ըսել կամ գրել յառաջիկային: Ներեցէք, որ այսօր բաւարարուիմ երկու բառով միայն, սիրտս բանամ ու ըսեմ.-

Կարոն Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան, ազգային ու եկեղեցական հայամարտին գիտակից ու հաւատարիմ գինւորեալներէն էր: Մտաւ այն տաճարներէն ներս, ուր հայութեան պաշտամունք կար եւ գոյամարտի նուիրուած բազին ու աղօթք:

Կը վշտակցինք իր տիկնոջ եւ ընտանեկան պարագաներուն ու գաղափարակից եւ գործակից եղբոր մը մասին գնահատանքով կը վկայեմ, որ Կարոն իր կեանքը իմաստաւորեց ծառայելով Հայ Դպրոցին ու Ազգային իշխանութեան կառուցին, ու մանաւանդ՝ ազգային եւ երիտասարդանուէր երկու մեծ կառուցներու:

Վարձքդ կատար եղբ. թիւթիւնճեան:  
Հանգիստ ցաւատանջ սրտիդ:  
Սաճ Խոսէ:

**ՏՈՒՔԹ. ՄԻՍԱՔ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

\*\*\*

Խոր կսկիծով իմացանք եղբ. Կարո թիւթիւնճեանի վաղահաս ու անժամանակ մահուան տխուր լուրը:

Խոր յուզումով կը մասնակցինք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին կորուստին եւ Կեդրոնական Վարչութեան սուգին: Եղբ. Կարոյին Հ.Մ.Ը.Մ.ական վաստակը, երկար տարիներու ծառայութիւնը, գաղափարական, հաւատաւոր հասկացողութիւնները եւ միութենական կեանքի յիշատակները կը մնան անմոռանալի:

Այս տխուր իրականութեան առջեւ ընդունեցէք խորագագ ցաւակցութիւններս եւ վշտակցութիւնս հանգուցեալ եղբոր ազնիւ տիկնոջ եւ հարազատներուն:

Թող Աստուած լուսաւորէ իր հոգին:  
Մոնթրէալ

**ՎԱՐՈՒԺԱՆ ՍԵՐՈՒԲԵԱՆ**

\*\*\*

Սրտի դառն կսկիծով իմացայ ցաւալի բօթը եղբ. Կարո



**Sarkis  
or  
Paul**

# SASSOUNIAN INC.

## Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street  
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220  
(213) 627-1206  
Outside Ca: 1-800-544-4419  
Fax: (213) 623-6981

[www.sassouniantools.com](http://www.sassouniantools.com)

E-mail: [info@sassouniantools.com](mailto:info@sassouniantools.com)



Թիւթիւնճեանի մահուան: Այս մահը շատ մեծ վիշտ պատճառեց մեր միութեան բոլոր անդամներուն անխտիր եւ ի մասնաւորի՝ Սուրբիոյ շրջանի մեր քոյր-եղբայրներուն: Ան մեծ էր հասակով, մեծ էր հոգևով, մեծ էր խելքով եւ մեծ էր հայրենիքի սիրով: Աստուած հոգին լուսաւորէ եւ մխիթարութիւն պարգեւէ իր այրիին եւ բոլոր հարազատներուն:

Թորոնթօ

ՄԱՆՈՒՅԼ ՀԱԼԼԱՃԵԱՆ

\*\*\*

Սրտի խոր կսկիծով տեղեկացանք վաղաժամ մահը մեր բոլորին սիրելի եղբ. Կարօ Թիւթիւնճեանին:

Մեծ է կորուստը իր կողակիցին, հարազատներուն եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Կ'ըսեն, թէ անփոխարինելի մարդ չկայ, բայց եղբ. Կարոյին յաւէտ բաժանումը մեծ բաց մը պիտի ձգէ իր շրջանակին եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին մէջ:

Թող Ամենակալ Աստուած իր հոգին լուսաւորէ եւ զինք արժանացնէ երկնքի արքայութեան, եւ իր կողակիցին՝ ազնււափայլ տիկ. Արփի Թիւթիւնճեանին, հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համբերութիւն եւ մխիթարութիւն պարգեւէ:

Եղբ. Կարոյին ժպտուն դէմքը միշտ դրոշմուած պիտի մնայ մեր բոլորին սրտերուն մէջ:

Եղբ. Կարօ վա՛րձքդ կատար: Մենք կը խոստանանք ըլլալ քեզի պէս հաւատացեալ Հ.Մ.Ը.Մ.ական: Քու եղբայրներուդ սրտերուն մէջ յիշատակդ պիտի մնայ անթաւառ:

Մոնթրէալ

ՏԻՐԱՆ ՇԱՀԻՆԵԱՆ

\*\*\*

Խորին ցաւակցութիւններս ձեզի եւ Կեղերոնական Վարչութեան բոլոր անդամներուն: Վստահ եմ, որ եղբ. Կարոյին մահը մեծ կորուստ մըն էր ձեզի եւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ին:

Գլուխնիդ ողջ մնայ:  
Մոնթրէալ

ԳԻՈՐԳ ՄԱՆԿԷԼԵԱՆ

\*\*\*

Խոր վիշտով իմացայ եղբ. Կարօ Թիւթիւնճեանի անսպասելի եւ կսկծալի մահուան տխուր լուրը:

Յարգանք հաւատաւոր Հ.Մ.Ը.Մ.ականին, յարգանք միութեանական իր վաստակին եւ յարգանք իր անմոռանալի յիշատակին:

Այս տխուր առիթով ընդունեցէք իմ ցաւակցութիւններս եւ խորազգաց վըշտակցութիւնս հանգուցեալ եղբոր ընտանիքի անդամներուն:

Մոնթրէալ

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

\*\*\*

Յաւով տեղեկացանք մեր բոլորին սիրելի եղբայր Կարօ Թիւթիւնճեանի մահուան անակնկալ գոյժը:

Հանգուցեալ եղբոր արժանիքները դժուար է մէկ առ մէկ նշել, որովհետեւ ան իր փոքր տարիքէն մինչեւ կեանքին վախճանը եղաւ ու մնաց հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ.ական մը:

Եղբայր Կարոյին մահով, համոզուած ենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը կորսնցուց իր հաւատարիմ ու նուիրեալ, իսկ հայ ժողովուրդը՝ իր հարազատ գաւակներէն մէկը:

Խորին ցաւակցութիւններս ձեռ բոլորին եւ հանգուցեալ եղբոր կողակիցին ու բոլոր պարագաներուն:

Յարգանք յիշատակին:

Աթէնք

ԿԱՐՊԻՍ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

\*\*\*

Անսահման կսկիծով տեղեկացանք եղբ. Կարօ Թիւթիւնճեանի անժամանակ մահուան գոյժը:

Աստուծմէ կը հայցենք, որ խաղաղութիւն պարգեւէ բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական մեր եղբոր հոգիին: Թող անոր երկար տարիներու անմնացորդ նուիրաբերումը օրինակ դառնայ եկող սերունդներուն:

Մխիթարութիւն ողբացեալ եղբոր անդամանելի կորուստով վշտահար այրիին եւ հարազատներուն:

Ցաւակցութիւններ Կեղերոնական Վարչութեան կազմին եւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ ընտանիքի անդամներուն:

Գաճիթէ

ՏՈՔԹ. ՍՈՒՐԷՆ ՊԱՅՐԱՄԵԱՆ

\*\*\*

Անսահման վիշտով ու ցաւով ստացանք տխուր լուրը եղբ. Կարոյին կսկծալի մահուան: Եղբոր հետ ունեցած ենք անմոռանալի պահեր: Թող Աստուած իր հոգին արժանի ընէ դրախտին եւ իր այրիին ու ձեզի ալ մխիթարութիւն պարգեւէ՝ այս

դժուարին օրերը յաղթահարելու համար:

Եղբ. Կարօ, թող հողը թեթեւ գայ գլխիդ տակ:  
Գահիրե:

ՊԵՐՃ ՀԱԼԼԱՃԵԱՆ

\*\*\*

Խորին ցաւակցութիւններս այս մեծ կորուստին համար:  
Եղբայր մը, որ իր կեանքը անկեղծօրէն նուիրեց Հ.Մ.Ը.Մ.ին:

Իսկական կորուստ մը: Եղբ. Կարոյին բացակայութիւնը պիտի զգանք բոլորս, ամէն առիթով, ըլլան անոնք ժողովներ, խաղեր կամ բանակումներ:

Խունկ եւ աղօթք մեր թանկագին ու անմոռանալի եղբոր յիշատակին: Քաջառողջութիւն ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր ծառայողներուն:

Գահիրե:

ԱՐԱ ՔԷՕՀՆԷԼԵԱՆ

\*\*\*

Եղբ. Կարօ Թիւթիւնճեանի մահով Հ.Մ.Ը.Մ.ը կորսնցուց իր կորովի, վաստակաշատ եւ ընտիր անդամներէն մէկը:

Եղբ. Կարոյին վաղաժամ մահուան լուրը ցնցեց մեր բոլորը եւ անակնկալի մատնեց մեզ:

Ոչ եւս է եղբ. Կարոն: Այլեւս պիտի չհանդիպինք իրեն Հ.Մ.Ը.Մ.ական ժողովներուն, սկստական հաւաքոյթներուն,

Ազգային Առաջնորդարանին եւ Ուսումնական Խորհուրդին մէջ: Պիտի չկարդանք իր գրութիւնները «Մարգիկ»ին մէջ: Իր հեղինակութեամբ նոր գիրքեր լոյս պիտի չտեսնեն:

Քամին խլեց պտղաբեր ծառի մը անթառամ պտուղներէն մէկը: Մահը բաժնեց մեզ եղբ. Կարոյէն, սակայն մարդուս գործն է միշտ անմահ: Եղբ. Կարոյին յիշատակը յաւերժ պիտի մնայ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ, իր բեղուն գործունէութեամբ եւ երախտաւոր ծառայութեամբ:

Մեր խորին վշտակցութիւնները յայտնելով, ամենակալ Աստուծոյ կը հայցենք, որ իր արքայութեան արժանացնէ եղբայր Կարոյին հոգին, ինչպէս նաեւ համբերութիւն եւ մխիթարութիւն պարգեւէ իր ընտանիքին, սգակիր պարագաներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Աղեքսանդրիա

ՏՈՔԹ. ԱՐՄԷՆ ԳԱԻՈՒՔՃԵԱՆ

\*\*\*

Եղբ. Կարոյին անակնկալ մահը խոր սուգի մատնեց բոլորս: Մեծ կորուստ մը բոլորիս համար: Դժուար պիտի ըլլայ ընդունիլ, որ այլեւս ոչ եւս է ան:

Սիտնի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏՈՅԵԱՆ

# Jewelry Burs from FOX! All shapes, all sizes! Here are just a few!



2245 E. Colorado Blvd. 104-240  
Pasadena, CA 91107 USA  
arak@foxburs.com



Contact: ARA KHATCHIKIAN  
Tel: 626-791-4327  
Fax: 626-791-0866

The Diamonds' Choice



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՈՒԷՏԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԻՒՆ

**Տ**աը տարուան ակամայ բացակայութենէ ետք, 6 Նոյեմբեր 2005ին Հ.Մ.Ը.Մ. վերադարձաւ Շուէտ, մասնաճիւղային աշխոյժ գործունէութեամբ Սթոքհոլմի հայ նորահաս սերունդին մարմնակրթութեան եւ հայեցի դաստիարակութեան նուիրուելու համար:

Հ.Մ.Ը.Մ., իբրեւ մեկուսի չըջան, նախապէս Շուէտի մէջ գործած է 1991-1995 տարիներուն: Այնուհետեւ, սակայն, ան կազմալուծուած է եւ կազմակերպական ներկայութենէ դադարած, մնալով սակայն ազգային ոգեշնչող ներկայութիւն գաղութին զաւակներուն մօտ:

2005ին, սերնդափոխութեան բնական հոլովոյթէ եւ գաղութին զգալի վերաշխուժացումէն ետք, նախկին Հ.Մ.Ը.Մ. ականներ եւ այլ երկիրներէ չըջանը նոր հաստատուած Հ.Մ.Ը.Մ. ականներ դիմեցին միութեան Կեդրոնական Վարչութեան, առաջարկելով կազմակերպական միաւորի մը վերստեղծումը Շուէտի մէջ:

Այսպէս, ամիսներու նախապատրաստական աշխատանքները արդիւնաւորուեցան Նոյեմբեր 2005ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի եւ Կեդրոնական Վարչութեան անդամ, Եւրոպայի ներկայացուցիչ՝ եղբ. Լեւոն Պաղտասարեանի չըջան այցելութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին վերակազմութեամբ:

Արդարեւ, 6 Նոյեմբեր 2005ին, Սթոքհոլմի արուարձաններէն Թենսթայի մէջ տեղի ունեցաւ Շուէտի մասնաճիւղի վերակազմութեան ժողովը, ներկայութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներու, մասնաճիւղի նորակազմ վարչութեան անդամներու՝ եղբայրներ Յակոբ

Վարդանեանի, Յակոբ Խաչերեանի եւ Վահէ Մահտեսեանի, տեղւոյն Հ.Յ.Դ. «Քրիստափոր» կոմիտէի ներկայացուցիչ Սիւզան Խարտալեանի, ՀՕՄԻ, ՍՈՒԱ ՀԱՅԿԻ (ՀՕՄԻ երիտասարդական բաժանմունք) ներկայացուցիչներու եւ 60 քոյր - եղբայրներու:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որուն երգեցողութենէն ի յայտ եկաւ, որ շատերը կարօտը ունէին անոր բարձրաձայն կատարումին...: Ապա, վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Վարդանեան բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, ներկայացուց նորակազմ վարչութեան անցնող ամիսներուն կատարած աշխատանքները - Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ կապեր, մասնաճիւղի գրանցման աշխատանքներ, չըջանի նախկին Հ.Մ.Ը.Մ. ականներու հետ հանդիպումներ եւ այլն:

Խօսքեր արտասանեցին եղբայրներ Վահէ Մահտեսեան եւ Ֆէտի Թաժրա: Առաջինը ներկայացուց մասնաճիւղին Փուլթալի խումբը, փորձերուն ընթացքը եւ գրանցման աշխատանքները: Եղբ. Ֆէտի պարզեց սկառուական կորիզի մը յառաջացման քայլերը:

Այս առիթով, ժողովին իր պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Եղբայրը ամփոփ գիծերով ներկայացուց միութեան համահայկական կառույցը, աշխարհասփիւռ իր մասնաճիւղերը եւ երկճիւղ՝ սկառուական եւ մարզական գործունէութիւնը: Եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ հպարտ պէտք է զգալ, որ կը պատկանինք միութեան մը, որ աշխարհի 26 երկիրներուն մէջ ունի շուրջ 25 հազար անդամ: «Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին ուրախութիւնը մեծ է, որովհետեւ հայեցի դաստիարակութեան նոր գործադաշտ մը այսօր





Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան միութեան դրօշը կը յանձնէ մասնաճիւղի ատենապետ եղբ. Յակոբ Վարդանեանին, իսկ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Լեւոն Պաղտասարեան միութեան ծրագիր-կանոնագիրը կը փոխանցէ մասնաճիւղի վարչական եղբ. Յակոբ Խաչերեանին:

բացուած է Ծուէտի մէջ», շեշտեց եղբ. Մկրտիչեան:

Իր կարգին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Լեւոն Պաղտասարեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Եւրոպայի մէջ տարած աշխատանքները: Ան փոխանցեց միութեան Եւրոպայի վարչութիւններուն աջակցութիւնը վերակազմուած մասնաճիւղին եւ թելադրեց, որ գոյութիւն ունեցող խանդավառութիւնը չպակսի, այլ Հ.Մ.Ը.Մ.ի գործը շարունակուի նոյնիսկ ամէնէն դժուար պայմաններու մէջ:

Հասաւ ժողովին ամէնէն տպաւորիչ բաժինը. Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան մասնաճիւղի ատենապետ եղբ. Յակոբ Վարդանեանին հանդիսաւոր կերպով փոխանցեց միութեան դրօշը, իսկ եղբ. Լեւոն Պաղտասարեան վարչութեան անդամ եղբ. Յակոբ Խաչերեանին յանձնեց միութեան ծրագիր-կանոնագիրը, մաղթելով որ մասնաճիւղը լաւագոյնս տէր կանգնի իրեն վստահուած ականդրին ու պատասխանատուութեան:

Ժողովին ողջոյնի խօսք արտասանեց շրջանի Հ.Յ.Դ. «Քրիստափոր» Կոմիտէի ներկայացուցիչ Սիւզան Խարտալեան: Ան շնորհակտեց Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը, իր ուրախութիւնը յայտնեց տարուած աշխատանքին համար եւ կոմիտէութեան ամբողջական օժանդակութիւնը խոստացաւ՝ նեցուկ կանգնելու մասնաճիւղին աշխատանքներուն:

Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

## ՈՒՂԵՐՁ

«Մարցիկ»ը դարձաւ 25 տարեկան: Ծնորհաւոր մեզ եւ Ձեզ:

Սփիռքում եւ ինչու չէ նաեւ Հայաստանում՝ հայ պարբերական մամուլը կոչուած է տարածողը, նուիրագործողը եւ ջատագովը դառնալու հայ գրականութեան, մշակոյթի, սերունդներ դաստիարակելու եւ հայ գիտական միտքը կատարելագործելու վեհ առաքելութեանը:

Հայ պարբերական ընտանիքի մէկ անդամն է նաեւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան «Մարցիկ» ամսաթերթը, որը հետեւելով «Առողջ հոգին, առողջ մարմնի մէջ է» ժողովրդական ասոյթին, դաստիարակել ու դաստիարակում է առողջ հոգով ու մարմնով սերունդներ:

Քառորդ դար տեւող իր կեանքով ու գործով «Մարցիկ» ամսագիրը, տարբեր պայմաններում, անշեղ մնաց իր սկզբունքային կեցուածքով, առաքելութեամբ ու նպատակասլաց գործունէութեամբ ու այսօր եւս շարունակում է իր ազանունէր ուղին:

Յանուն Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան Կենտրոնական Վարչութեան ու նրա ողջ ընտանիքի՝ ի սրտէ շնորհաւորում ենք «Մարցիկ»ի 25ամեայ յոբելեանը եւ այդ առիթով մեր շնորհաւորանքները եւ յաջողութեան մաղթանքները յղում Հ.Մ.Ը.Մ.ին, թերթի խմբագրին, խմբագրական ու աշխատանքական ողջ կազմին:

Յաջող երթ ենք մաղթում «Մարցիկ»ին:

Յարգանքով՝

Հ.Մ.Ա.Կ.Ի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

### «ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՅՈՆՏԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Մարցիկ»ի 25ամեակի առիթով՝

● Եղբ. Հրաչ Սիսեռեան (Փարիզ) \$ 2500

● Եղբ. Կարապետ Ն. Թոփճեան (Երևան) \$ 250

### «ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

● Տէր եւ տիկին Կարօ եւ Դանիա Տէմիրճեաններու մանչ զաւակով մը բախտաւորուելուն առիթով՝

Տէր եւ տիկին Վաչէ եւ Հուրի Տէմիրճեաններ (Սիսոնի) \$ 100

● Եփրոնի Թիթիւնճեան-Նալպանտեանի մահուան առիթով՝

Եղբ. Տիրան Ծահիճեան (Մոնթրէալ) \$ 50



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՅՖԱՅԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԱԾ ԿԵԴՐՈՆԻՆ ԲԱՅՈՒՄԸ

**30** Սեպտեմբեր 2005ը յիշատակելի օր մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Հայֆայի փոքրաթիւ, սակայն կենսունակ մասնաճիւղին համար, որ հանդիսաւոր կերպով բացումը կատարեց վերանորոգուած իր կեդրոնին:

Բացման հանդիսութեան տօնական միջնորոտ ստացան կեդրոնն ու շրջակայքը, որոնք յորդեցան 300 ներկաներով՝ Հայֆայէն, Եաֆայէն, Երուսաղէմէն եւ Նազարէթէն: Ներկաներու շարքին էին կեդրոնի բարերար, մասնաճիւղի նախկին անդամ, այժմ Գանատա հաստատուած եղբ. Միհրան Պարոնեան, Հայֆայի քաղաքապետ Եոնա Եահաւ, շրջանի հոգեւոր հովիւ՝ Աւետիս Քհնյ. Իփրաճեան եւ բազմաթիւ հրաւիրեալներ:

Վերանորոգուած կեդրոնին բացման ժապաւէնը հատեցին

բարերար եղբ. Միհրան Պարոնեան, մասնաճիւղի ատենապետ եղբ. Ճոնի Մուրատճալեան եւ մասնաճիւղի հիմնադիրներէն, այժմ Հայաստան հաստատուած եղբ. Հայկ Ասլանեան:

Այս առիթով, ներկաները ողջունեց քաղաքապետ Եոնա Եահաւ: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հայկական Յեղասպանութեան եւ հրէական ողջակիզումին, նշելով երկու ժողովուրդներուն ճակատագրակից ըլլալու իրողութիւնը:

Ապա, վերանորոգուած կեդրոնը իր աղօթքով օրհնեց Աւետիս Քհնյ. Իփրաճեան, որմէ ետք խօսքեր արտասանեցին եղբայրներ Հայկ Ասլանեան եւ Միհրան Պարոնեան: Անոնք շեշտեցին դպրոցի եւ եկեղեցւոյ կողքին՝ նման կեդրոնի մը անհրաժեշտութիւնը ազգային ինքնութեան եւ մշակոյթի պահպանման մէջ:

Բացման հանդիսութեան յաջորդեց հիւրասիրութիւն:



ՀԱԿԱՌԱԿ ԵՐԿՐԻ ԴԺՆԴԱԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ՝

# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԸ ԿԸ ՄՆԱՅ ՊԱՏՆԵՇԻ ՎՐԱՅ

## Թղթակից ՊԱՂՏԱՏ

**Մ**էկ կողմէ մաս ու աւեր, իսկ միւս կողմէ՝ վերապրելու եւ վերականգնելու կամք: Հակասական երկու պատկերներ, որոնք փոխն ի փոխ իրարու կը գերակշռեն Իրաքի մէջ, ահա, երրորդ տարին ըլլալով: Պաղտատի հայտնութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքը կ'ապրին ամէնօրեայ թռուռուքի մէջ, սակայն անոնք չեն կտրած խաղաղ ու բարօր ապագայի մը իրենց յոյսը: Հետեւաբար, անոնք կը շարունակեն ազգային-միութենական իրենց կեանքը՝ պայմաններու համեմատ եւ երբեմն ալ՝ տիրող վատ պայմանները յաղթահարելով:

### ՓԱԿ ՄԱՐՁԱՍՐԱՀԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ԱՄԱՐՏ

Անցնող ամիսներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի մասնաճիւղը աւարտեց իր փակ մարզասրահին շինութիւնը: Մարզասրահը այժմ կը գտնուի մասնաճիւղին վարչութեան տրամադրութեան տակ: Կը մնան մարզասրահին ներքին կահաւորման եւ սարքաւորման գործերը. սրահի տախտակամածի աշխատանք, զո-

վացուցիչ սարքեր, ժամացոյցի ելեկտրական տախտակի գետեղում եւ այլն:

### ՄԱՐՁԱԿԱՆ ՅԱՉՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Մասնաճիւղին մարզական խումբերը իրենց փորձերն ու մրցումները կը կատարեն ընձեռուած յարմարութիւններու համաձայն: Պասքեթպոլի աղջկանց խումբը տիրացաւ Պաղտատի միջ-ակմբային ախոյեանութեան առաջնութեան: Հէնտպոլի տղոց խումբը երրորդ հանդիսացաւ ակմբային մրցաշարքի մը ընթացքին, որուն մասնակցեցան վեց խումբեր:

Վոլիպոլի մրցումներուն, Սուլէյմանիէ քաղաքին մէջ կազմակերպուած մրցաշարքին, աղջկանց երիտասարդական խումբը 16 խումբերու մէջ հանդիսացաւ երկրորդ, իսկ աղջկանց յառաջացած մակարդակի խումբը 12 խումբերու մէջ գրաւեց պատուաբեր երրորդ դիրքը:

### ՍԿԱՌՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Անցնող ամիսներուն, քանի մը անգամուան ընդհատումէ ետք, մասնաճիւղին սկստական խումբերը աւարտեցին Ա. կարգի իրենց դասընթացքները: Տեղի ունեցաւ փոխ խմբապետի աստիճանատուութիւն: Փոխ խումբապետի աստիճանի արժանացան եղբայրներ Արա Քիչմիշեան, Պերճ Թիւֆէնկեան եւ քոյր Սօսի Վահանեան:

Սկստական շարքերը նշեցին «Հայ Սկստակ Օր»ը: Այս առիթով անոնք այցելեցին եկեղեցի, ներկայ գտնուեցան Ս. Պատարագի, ապա՝ հաղորդութիւն ստանալէ ետք, հաւաքուեցան ակումբ, ուր փոխանցուեցաւ օրուան պատգամը եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

### ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 90ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ

Մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Հայկական Յեղասպանութեան 90ամեակի առիթով Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շրջափակը կազմակերպուած ձեռնարկին:

Ձեռնարկին օրը, եկեղեցւոյ



Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի պասքեթպոլի աղջկանց խումբը, որուն անդամները մաս կը կազմեն նաեւ Իրաքի ազգային խումբին: Զախիմ՝ մասնաճիւղի ատենապետ եղբ. Պարգեւ Ասլանեան: Կեդրոնը, մասնաճիւղի փոխ ատենապետ, խումբին եւ Իրաքի ազգային խումբին մարզիչ եղբ. Վահէ Միհրանեան:



զանգակատունէն մինչեւ վար, 9 մեթր հասակով եւ 3 մեթր լայնքով կախուեցաւ պաստառ մը, որուն վրայ գծուած էին զոյգ Մասիսները: Անոնց մէջէն ծագող արեւը իր ճառագայթներով կը լուսաւորէր երկինքը: Արարատի լանջին կային հագարաւոր խաչեր՝ ի նշան շիրիմներու եւ անթաղ նահատակներու: Վերեւը կը կարդացուէր գրուած ձեռքով «Անոնց որոնք իրենց արիւնով ոռոգեցին ազատութեան նանապարիք»:

Նկարին աջին ներկայացուած էր Ծիծեռնակաբերդը, իսկ ձախին՝ մայր մը իր զաւակը բարձրացուցած դէմքով: Ամէնէն վարի գրուածները կ'ըսէր. «Այլեւս ոչ լաց, ոչ աղի արցունք: Այլ՝ արդար դատով առնենք իրաւունք»:

Այս առիթով պատրաստուած էր



Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի վոլիպոլի աղջկանց երիտասարդական մակարդակի խումբը:

Հայկական Յեղասպանութեան ճանաչումը պահանջող յուշագիր մը, որ ներկաներուն կողմէ ստորագրուելէ ետք՝ փոխանցուեցաւ ՄԱԿի Պաղտատի գրասենեակի պատասխանատուներուն:

Յաւարտ Ս. Պատարագի, ներկաները ուղղուեցան եկեղեցւոյ շրջափակը գտնուող խաչքարը եւ հոն գետեղեցին ծաղկեպսակներ: Ծաղկեպսակ մըն ալ գետեղուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին կողմէ, իսկ սկաուտական կազմի անդամները, իրենց կարգին, մէկական կարմիր վարդեր գետեղեցին խաչքարին առջեւ:

**ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՄՐՅԱՇԱՐՔԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ**

Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի տղոց եւ աղջկանց պասքեթպոլի խումբերը իրենց մասնակցութիւնը բերին պասքեթպոլի համահայկական առաջին մրցաշարքին, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ: Թէեւ խումբերը փայլուն ար-

**BDF** ●●●●


**SUD** S.A.L. AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10

դիւնքներ չարձանագրեցին, սակայն հայրենիք այցելութեան բախտաւորութիւնն իսկ մեծ նշանակութիւն ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.ական նորահաս սերունդին համար:

**ՀԱԼԷՊԻ ՄԱՍՆԱՃԻՂԻ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆ**

Սկստական շարքերը տարիներու երազ մը իրականացուցին՝ երկրէն դուրս բանակում կատարելով: 30 հոգի նոց պատուիրակութիւն մը իր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Լ.Մ.ի Սուրիոյ Շրջանային Սկստաւ. Խորհուրդին կողմէ կազմակերպուած բանակումին, Քեսապի մէջ:

Բանակումին մէկ շաբթուան տեւողութեան, Պաղատի սկստաները առիթը ունեցան ծանօթանալու եւ մօտէն շփուելու Հ.Մ.Լ.Մ.ի Հայկալի մասնաճիւղի «Գրիգոր Յակոբեան» եւ «Շաւարշ Քրիսեան» միաւորներու սկստաներուն հետ: Փորձառութիւններու եւ գիտելիքներու փոխանակումը, եղբայրական սիրալիր ընդունելութիւնը եւ բանակումին ճորտ յայտագիրը անմոռանալի պահեր պարգեւեցին պաղտատահայ սկստաներուն:

**ԳԻՇԵՐԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ**

Հայկալին վերադարձին, մասնաճիւղին խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը ունեցան գիշերային միօրեայ բանակում մը՝ երեկոյեան ժամը 10.30էն առաւօտեան ժամը 6.30:

Բանակումին յայտագիրը ընդգրկեց դասախօսութիւն՝ Քրիստափոր Միքայէլեանի նահատակութեան 100ամեակին մասին: Ապա, տեղի ունեցաւ ընթացիք, որուն յաջորդեց զեկուցում մը՝ Քեսապի բանակումին մասին, վի-



Խոստմնալից գալիկներ իրենց պատասխանատուներուն հետ:

տեօ երկդ ցուցադրութեամբ:

Այնուհետեւ, մասնակցողները բաժնուեցան չորս խումբի՝ իւրաքանչիւր խումբի տրուեցաւ մկրատ, գունաւոր մատիտներ, մէկ անգամ գործածուող կերպընկալէ ամաններ, գաւաթներ եւ հեղուկ խմելու ձողիկներ: Այնոցմէ պահանջուեցաւ առանց խէժ գործածելու, կէս ժամուան մէջ, կարելի եղածին չափ ստեղծագործութիւններ կատարել եւ ձեռնային աշխատանքներ պատրաստել: Շատ գեղեցիկ գաղափարներ մէջտեղ

եկան. ժամացոյց, Արցախի պապիկն ու մամիկը, դրօշակ եւ այլն:

Յայտագիրը շարունակուեցաւ զրոյցով, նիւթը՝ «Ահաբեկչութիւն», մանաւանդ՝ բաղդատութիւնն ղնելով այժմ իրաքի մէջ պատահող դէպքերուն եւ օրին՝ հայութեան զինեալ պայքարին միջեւ: Ապա, կրկին տեղի ունեցաւ խմբային խաղ մը: Այս անգամ լեզուական: Որոշ տառով կենդանիներու անուններ, մայրաքաղաքներու անուններ եւ օտար լեզուով գործածուող 20



Մասնաճիւղին աստիճանաւորական եւ խմբապետական կազմերը:

բառերու հայերէնները գրել: Խաղին յաջորդեց զրոյց, նիւթը՝ «Հ.Մ.Լ.Մ.ականը»: Զրոյցին ընթացքին ցուցադրուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան (այժմ հանգուցեալ «Մ») անգամ եղբ. Կարօ Թիւթիւնճեանի դասախօսութիւնը, արտասանուած՝ 2003ի Դեկտեմբերին, մասնաճիւղին ըսկատական խումբին Պէյրութ այցելութեան ընթացքին:

Յայտագրին վերջին հանգրուանը եղաւ խաղ: Դարձեալ խումբերու բաժնուելով, գրեական պիտոյքով եւ առանց խէժի, մասնա-



կ ի ց ն ե ր ը  
իրենց երե-  
ւ ա կ ա յ ու -  
թ ի ւ ը  
գ ո ռ ծ ա ծ ե -  
լ ո վ  
տ ա կ ա յ  
գ ե տ ի ջ ու -  
ր ե ռ ն ա լ  
օ գ տ ա -  
գ ո ռ ծ ե -  
լ ո վ  
ր ա ս տ ե -  
ց ի ն բ ա -  
ն ա կ ա -

վալը մը իր լրիւ կառույցով: վրաններ, խոհանոց, բաղնիք եւ այլն:

Խաղերը ծառայեցին իրենց նպատակին, հաւաքական աշխատանքի մթնոլորտ ստեղծելով եւ բանակողներու ստեղծագործական ոգին զարգացնելով:

**ԳԱՅԼԻԿ-ԱՐԾՈՒԻԿՆԵՐՈՒ ՓՈՔՐ ՀԱՆԳԷՍԸ**

Երկար տարիներ աւանդութեան վերածուած շրջանային հնգօրեայ մարզահանդէսը, երկրի պայմաններուն բերումով, 2005ին փոխարինուեցաւ գայլիկ-արծուիկներու փոքր հանդէսով մը, որ տեղի ունեցաւ ամառնային հաւաքոյթներու աւարտին:

Հանդէսին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ապա, տեղի ունեցաւ վոճմակներու եւ երամներու տողանցք, իւրաքանչիւրը իր պատասխանատուին առաջնորդութեամբ: Յաջորդեց աստիճանատուչութիւնը չորս պատասխանատուներու, որոնք իրենց փորձառական շրջանը աւարտելով՝ արժանացան փոխ վոճմակապետի եւ փոխ երամապետուհիի աստիճանի եւ կրեցին ճերմակ երիզով դեղին ուսնոցներ ու դեղին փողկապ:

25 գայլիկ-արծուիկներ, իրենց կարգին, կակուղ թաթիկի գիտելիքներու դասընթացքը աւարտելով եւ խոստում

տալով՝ կրեցին դեղին փողկապ: Ապա, տեղի ունեցան արտասանութիւններ, գուարճայի խաղեր եւ մրցումներ:

**ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Իրաքի ծանօթ դէպքերէն ետք առաջին անգամ ըլլալով, երկրի ֆուտպոլի ֆետերասիոնին հովանաւորութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան կազմակերպութեամբ, փոքր դաշտի վրայ տեղի ունեցաւ ֆուտպոլի մրցաշարք մը, մասնակցութեամբ չորս խումբերու. «Նաամէ» ընկերութիւն, ոստիկանութիւն, Իրաքի երիտասարդական եւ Հ.Մ.Ը.Մ.: Մրցաշարքը նուիրուեցաւ «կամուրջի աղէտ»ի գոհերուն:

Մրցաշարքին բացման հանդիսութեան ներկայ գտնուեցաւ Իրաքի մարմնամարզի եւ երիտասարդութեան փոխ նախարարը:

Մրցաշարքը տեւեց չորս օր եւ ախոյեան հանդիսացաւ «Նաամէ» ընկերութեան խումբը:

**Maison Mere**  
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt  
Tel: (202) 3913296 - 3918542  
Fax: (202) 3903899

**Ramses Hilton**  
Tel: (202) 5758000 - 5744400  
Direct: (202) 5751790

**Zamalek**  
11 Hassan Sabry st., Degla center  
Tel: (202) 3322121 - 3322130  
Fax: (202) 3322130



**VARTAN KAZANDJIAN**

KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com

Joillier-Orfevre Fonde en 1920



# ՊՈՒԼԿԱՐԱՋԱՅ ԵՐԿՈՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐ ԱՐԱՐԱՏԻ ՍԷՊ ՊԱԳԱԹԻՆ



Ֆ. Փ. - Պ. Ճ.  
ՍՈՖԻԱ

**Ի**նչ որ Սիոն լեռն է հրեաներուն համար, Արարատն է հայուն համար: Ան գրաւած է մեր սէրը, մեր ուշադրութիւնը՝ իր մոգական ձգողութեամբ: Մեծ Մասիսի գագաթը ամենաբարձրն է Կովկասի մէջ (5165 մետր), աւելի քան՝ Եւրոպայի Մոն Պլանը:

Աւետիք Իսահակեան կ'ըսէ.  
«Արարատի ծեր կատարին Դար է եկել, վայրկեանի պէս, Ու անցել:  
Անհուն բուռով կայծակների Սուրն է բեկուել աղամանդին, Ու անցել:  
Մահախուճապ սերունդների Աչքն է դիպել լոյս գագաթին Ու անցել:  
Հերթը հիմա բոցն է մի պահ. Դու էլ նայիր սեգ նակատին Ու անցիր»:

Բազմաթիւ լեռնազնայներ տենչացած են նուաճել սէգ գագաթը, սակայն թրքական իշխանութիւնները մինչեւ վերջերս հրաման չէին տար: Երբ արտօ-

նութիւն տրուեցաւ, շատ մը լեռնագրնացներ փութացին բարձրանալ անոր կատարը: Ժամանակին նման փորձեր եղած են: Յիշել աննման Խաչատուր Աբովեանը, որ 19րդ դարուն գերմանացի գիտնականներու հետ բարձրացած է գագաթը:

Վերջերս, Ֆրանսահայ (մարսէյաբընակ) Մարք Սարգիսեանը եւ Կարօ Տէրտէրեանը կ'երազէին մագլցել գագաթը, սակայն միայն առաջինը հասաւ իր փափաքին, երկրորդին հրաման չտրուեցաւ: Անոնց յաջորդեցին քանի մը յունահայեր:

Պուլկարահայ մագլցողներ՝ Ահարոն Քոչեան եւ Յովակիմ Քէշիշեան 7 Սեպտեմբեր 2005ին ոտք կոխեցին Արարատի գագաթին վրայ: Այս տղաքը Հ.Մ.Ը.Մ.ական են, Մելիք Ճամճեանի Փլովտիվի սկաուտական խումբի եղբայրներ եւ լեռնագնացներու «Վերթիքը» ակումբի անդամներ:

Արշաւախումբը, եօթը հոգիէ բաղկացած, Փլովտիվէն ճամբայ կ'ելլէ Սեպտեմբեր 1ին: Պոլիս հասնելով անոնք կը վարձեն քիւրտ առաջնորդ մը: Արարատ բարձրանալէ առաջ կ'այցեցին Կարս, Անի եւ Պայազիտ: Վերելքը կը կատարուի հարաւի ճամբով: Ինքնաշարժը գիրենք կը հասցնէ մինչեւ 2400

մետր բարձրութիւն: Առաջին կայանը կը հաստատեն 3200 մետրի վրայ, իսկ երկրորդը՝ 4200 մետրի: Յաջորդ առաւօտ, Սեպտեմբեր 7ին, ժամը երեք ու կէսին ճամբայ կ'ելլեն դէպի գագաթ: 4300 մետրէն, ձիւնն ու սառույցը կը դիմաւորէ գիրենք: Նախ, ժամը 6ին, Յովակիմին կօշիկները կը ճգմեն գագաթի ձիւնը, յետոյ, ժամը 7ին, Ահարոնը կ'ունենայ նոյն բախտաւորութիւնը: «Արագածը եւ Երեւանը կը տեսնէինք», կ'ըսեն տղաքը: Երբ հարցուցինք թէ ի՞նչ էր ձեր առաջին տպաւորութիւնը: «Սկսանք երեխայի պէս լալ», ըսին: Իսկ Ահարոնը աւելցուց. «Նորածին տղուս պորտալարը ձգեցի հոն, իբրեւ մեր յաւերժութեան գրաւական»:

Պուլկարները շատ գոհ մնացած են այս արշաւէն:

Արարատէն ետք, խումբը կ'այցելէ Վան եւ Աղթամար, նաեւ՝ քաղաքին թանգարանը: «Որեւէ խօսք, գրութիւն չտեսանք հայութեան մասին», կ'ըսեն երիտասարդները:

Փլովտիվի տղոց յաջորդ նպատակը Արագածի գագաթը բարձրանալ է: Իսկ Մոն Պլանը, կը հարցնենք: «Արդէն բարձրացած ենք», կը պատասխանեն:

Ապրիլ տղաք՝ բարձրացէք եւ բարձրացուցէք հայու անունը:



# Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.Ը ԿԸ ՆՇԷ Հ.Մ.Ը.Մ.Ի 87ԱՄԵԱԿԸ



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի  
Խմբապետական Խորհուրդ  
ԵՐԵՎԱՆ

**19** Նոյեմբեր 2005ին, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Խմբապետական Խորհուրդը ձեռնարկով մը նըշեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 87ամեակը: Ձեռնարկին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի միաւորներու 40 աստիճանաւորներ, մբապետական Խորհուրդի անդամներ, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, անդամ եղբայրներ՝ Արամ Ֆրանկեան, Դաւիթ Յակոբեան, միաւորներու վարչակազմներ՝ քոյր Այտա Բախչեան եւ Ռազմիկ Աւագեան: Հիւրերու կարգին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յարութիւն Յարութիւնեան, միջազգային կապերու պատասխանատու եղբ. Բազրատ Եսայեան, եղբ. Սերոբ Տէր Պօղոսեան եւ «Երկիր Մեղի» պատկերասփիւռի ընկերութեան տնօրէն Գեղամ Մանուկեան:

Ձեռնարկին ողջոյնի եւ շնորհաւորութեան խօսքերով ելոյթ ունեցան եղբայրներ Հրաչ Շմաւոնեան, Յարութիւն Յարութիւնեան եւ Գեղամ Մանուկեան: Այս առիթով տեղի ունեցաւ աստիճանատուութիւն: Աստիճաններ եւ կարգեր տրուեցան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի Խմբապետական Խորհուրդի կողմէ կազմակերպուած աստիճանաւորական մնայուն դպրոցին եւ այդ ծիրին մէջ կատարուած երկու սեմինար-

բանակումներու եւ մէկ դպրոց-բանակումի մասնակիցներուն: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի աստիճանաւորական շարքերը հարստացան 6 խմբապետներով, 8 փոխ խմբապետներով, 9 վարիչ առաջնորդներով, 9 առաջնորդներով եւ մէկ փոխ առաջնորդով:

Ձեռնարկին պաշտօնական բաժնին աւարտէն ետք, սկսուաներու կողմէ կազմակերպուեցան բազմաթիւ խաղեր: Ընթերցուեցաւ Վանաձորի միաւորի սկսուած քոյր Լիլիթ Մխիթարեանի գըրած բանաստեղծութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ի մասին (տեսնել առաւելին):

Ստորեւ ցանկը՝ աստիճանաւոր նոր քոյր-եղբայրներուն.-

●**ԽՄԲԱՊԵՏ.-** Արթուր Կարապետեան, Նունէ Մարգարեան (Երեւան), Յարութիւն Գալստեան, Օքսաննա Մովսիսեան (Վանաձոր), Գոհար Զարգարեան, Նարինէ Զարգարեան (Վ. Բախչեան):

●**ՓՈՒՆ ԽՄԲԱՊԵՏ.-** Լենա Միրզոյեան, Անահիտ Ոսկանեան (Երեւան), Աննա Սարգսեան (Աբովյան), Ալիք Սուրատեան, Վարդան Միրումեան (Չարենցաւան), Յասմիկ Առաքելեան (Վանաձոր), Կարէն Տէրտէրեան (Գիւմրի), Գէորգ Օհանեան (Վ. Բախչեան):

●**ՎԱՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴ.-** Անուշ Կաբաբեան, Օֆելիա Յարութիւնեան, Անդրանիկ Սարգսեան, Էտկար Քաջոյեան, Սարմէն Պօղոսեան (Երեւան), Տիգրան Սարգսեան (Վանաձոր), Անահիտ Բեգլարեան, Աստղիկ Բեկնազարեան (Աբովյան), Նարէ Խլղաթեան (Վ. Բախչեան):

●**ԱՌԱՋՆՈՐԴ.-** Ռուտիկ Մկրտչեան, Միսաք Յարութիւնեան, Հայկ Ղազարեան, Վարդան Սարգսեան, Աղաս Քալաչեան, Արմէն Ղազարեան, Գէորգ Սուրուկեան (Գիւմրի), Լուսինէ Յովհաննիսեան (Երեւան), Գէորգ Եփրեմեան (Մասիս):

●**ՓՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴ.-** Սենիկ Սմբատեան (Վ. Բախչեան):

## Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

Ինքը, անշուշտ, փոքրիկ մի բառ, Յապաւումով ունի չորս տառ, Ընդամէնը՝ Հ.Մ.Ը.Մ., Բայց այն այնքան խորիմաստ է, Այնքան խորհուրդ ունի իր մէջ, Ինչպէս մի մեծ կաւէ տակառ, Մէջը լցրած ոսկէ շաքար, Այդ շաքարի ամէն հատիկ Մի խորհուրդ է՝ Պոկուած բարու ոսկէ սրտից: Արդէն ութսուն եւ եօթը տարի Հ.Մ.Ը.Մ.ի հատիկները Բարութիւն են սերմանում Սկսուաների սրտերում: Սերմանում են սիրելի միմիանց, Վնաս չտալ ոչ մէկին, Սիրելի իրենց հայրենիքը Թէկույ օտար ասիերում: Այն օգնում է հայ սկսուտին Շփուել, տեսնել իր ազգակցին: Պարտական ենք մենք Հ.Մ.Ը.Մ.ին, Որ տուեց մեզ այնքան բարին Տուեց սիրելի հայրենիքը, Բնութիւնն ու աշխարհը, Չարին բարով պատասխանել, Բարով աշխարհը փրկել:

ԼԻԼԻԹ ՄԽԻԹԱՐԵԱՆ  
14 տարեկան  
Վանաձորի միաւորի անդամ



# Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ 37ՐԴ ԽՈՐՀՐԳԱԺՈՂՈՎԻՆ, ԹՈՒՆՈՒՉ

**5**-9 Սեպտեմբեր 2005ին, Թուրքի Համամէթ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Համաշխարհային Սկաուտական Շարժումի 37րդ խորհրդաժողովը, մասնակցութեամբ՝ 122 երկիրներէ աւելի քան 1200 ներկայացուցիչներով: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի խորհրդաժողովին մասնակցեցաւ երկանդամ պատուիրակութեամբ մը, բաղկացած՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանէ եւ միջազգային կապերու պատասխանատու եղբ. Բազրատ Եսայեանէ: Խորհրդաժողովը իր օրակարգին մէջ քննեց ազգային սկաուտական նոր կազմակերպութիւններու անդամակցութեան հարցը Հ.Ս.Շարժումին: Քուէարկութեամբ Հ.Ս. Շարժումի լիբրաւ անդամ դարձան Ալպանիոյ, Քենիոյ եւ Մալուրի սկաուտական կազմակերպութիւնները:



Խորհրդաժողովը զեկուցումներ լսեց Համաշխարհային սկաուտական 21րդ բանակումին (Մեծն Բրիտանիա, 2007) եւ սկաուտական 38րդ խորհրդաժողովին (Քորէա, 2008) մասին: Ապա, քուէարկութեամբ որոշուեցաւ, որ Համաշխարհային սկաուտական 22րդ բանակումը տեղի ունենայ Շուէտի մէջ (2011), իսկ սկաուտական 39րդ խորհրդաժողովը եւ երիտասարդական 11րդ Փորումը՝ Պրագիի մէջ (2011):

Խորհրդաժողովը քննեց նաեւ Հ.Ս. Շարժումի Բիւրոյին կազմը նոր անդամներով համալրելու հարցը եւ առաջադրուած 15 թեկնածուներէն ընտրեց վեցը՝ վեր տարուան գործունէութեան համար: Հ.Ս. Շարժումի Բիւրոյի նախագահ ընտրուեցաւ Հերման Հուրի (Հոնկ Գոնկ), փոխ նախագահներ՝ Թերէզ Պըրմինկէզմ (Պելճիքա) եւ Ֆիլիփ Տա Քոսթա (Ֆրանսա):








- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Yerevan**  
32-38, Hanrabadoutian Street,  
Yerevan 375010, Armenia  
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
sales@europehotel.am

[www.europehotel.am](http://www.europehotel.am)



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԻՋ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ՓԱՅԼՈՒՆ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆԸ

## Թղթակից ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Հ.Մ.Ը.Մ.Ի Պուենոս Այրեսի միջ-դպրոցական երկրորդ մարզախաղերը (Միջ-դպրոցական Մարզական Մրցանակ՝ Liga Intercollegial Deportiva Armenia Homenetmen - LIDAH), գաղութի հայկական բոլոր վարժարաններուն մասնակցութեամբ, 2005ին պատկուեցան յաջողութեամբ: Առաջին հանգրուանին, դպրոցները մրցեցան իրարու դէմ, խաղերը կատարելով շրջուն ձևով՝ իւրաքանչիւրը հաստատութեան մը մէջ: Այսպէս, աշակերտները առիթը ունեցան իրարու հանդիպելու, հասնելով Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներէն մէկուն՝ եղբայրութեան եւ համագործակցութեան ամրապնդման:

Մարզախաղերու աւարտական փուլի ճակատումները եւ փակման արարողութիւնը տեղի ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի Ռամոս Մեխիայի մարզադաշտին վրայ, ուր նախ կատարուեցան աղջը-

կանց մինի վոլիի եւ ֆութպոլի մրցումները: Հոծ բազմութիւն մը ներկայ գտնուեցաւ մրցումներուն, որոնց ընթացքին թէ՛ փոքրերը եւ թէ՛ իրենց ծնողները ապրեցան անմոռանալի օր մը (Մրցումներուն ընդհանուր դասաւորման պատկերը տեսնել առանձին):

Հարկ է նշել, որ արդէն աւանդութիւն դարձած «Չալէն-ճըր» մրցանակին կողքին, այսուհետեւ մարզախաղերու յաղթական վարժարանին պիտի յանձնուի նոր մրցանակ մը՝ «Յակոբ եւ Աշխէն Թիւֆէնքճեան-Սէրակոբեան» մրցանակը, շնորհիւ Բաֆֆի Սէրակոբեանի աջակցութեան եւ թանկագին օժանդակութեան:

Մարզախաղերը վերջ գտան փակման արարողութեամբ, իւրաքանչիւր վարժարանի ներկայացուցիչ աշակերտներով կազմուած աւանդական տողանցքով, գաղութային, հայկական եւ կրթական կազմակերպութիւններու վարչականներու, մեծ թիւով ծնողներու, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ականներու ներկայութեամբ:

## ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԴՈՐՈՒՄԸ

### ՀԷՆՏՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ (4րդ եւ 5րդ դասարաններ)

1. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութիւն
2. Վիսենթէ Լոփէսի Այգային Վարժարան
3. Արծրունի Այգային Վարժարան
4. Մարի Մանուկեան Կրթական Հաստատութիւն
5. Միխիթարեան Վարժարան

### ՀԷՆՏՊՈԼ ԱՂՋԻԿՆԵՐ (6րդ եւ 7րդ դասարաններ)

1. Վիսենթէ Լոփէսի Այգային Վարժարան
2. Արծրունի Այգային Վարժարան
3. Միխիթարեան Վարժարան
4. Մարի Մանուկեան Կրթական Հաստատութիւն
5. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութիւն

### ՄԻՆԻ ՎՈԼԻ ԱՂՋԻԿՆԵՐ (4րդ դասարան)

1. Վիսենթէ Լոփէսի Այգային Վարժարան
2. Արծրունի Այգային Վարժարան
3. Միխիթարեան Վարժարան եւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութիւն

### ՄԻՆԻ ՎՈԼԻ ԱՂՋԻԿՆԵՐ (5րդ դասարան)

1. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութիւն
2. Արծրունի Այգային Վարժարան
3. Միխիթարեան Վարժարան
4. Վիսենթէ Լոփէսի Այգային Վարժարան

### ՄԻՆԻ ՎՈԼԻ ԱՂՋԻԿՆԵՐ (6րդ դասարան)

1. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութիւն
2. Վիսենթէ Լոփէսի Այգային Վարժարան

### ՄԻՆԻ ՎՈԼԻ ԱՂՋԻԿՆԵՐ (7րդ դասարան)

1. Պաղչէճեան Վարժարան
2. Արծրունի Այգային Վարժարան
3. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատութիւն
4. Վիսենթէ Լոփէսի Այգային Վարժարան
5. Միխիթարեան Վարժարան

### ՖՈՒԹՊՈԼ «ԲԱՐԵԿԱՍՈՒԹԻՒՆ» ՄՐՅԱՆԱԿ

- 4րդ եւ 5րդ դասարաններ՝ Խրիմեան Վարժարան
- 6րդ եւ 7րդ դասարաններ՝ Պաղչէճեան Վարժարան

**ՖՈՒԹՊՈՒԼ (Առաջին 3րդ դասարաններ)**

1. Մարի Մանուկեան Կրթական Հաստատություն
2. Արծրունի Ազգային Վարժարան
3. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատություն
4. Վիսենթե Լոփեսի Ազգային Վարժարան
5. Խրիմեան Վարժարան
6. Պաղչէճեան Վարժարան
7. Մխիթարեան Վարժարան

**ՖՈՒԹՊՈՒԼ (4րդ եւ 5րդ դասարաններ)**

1. Մխիթարեան Վարժարան
2. Վիսենթե Լոփեսի Ազգային Վարժարան
3. Պաղչէճեան Վարժարան
4. Մարի Մանուկեան Կրթական Հաստատություն
5. Արծրունի Ազգային Վարժարան
6. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատություն
7. Խրիմեան Վարժարան

**ՖՈՒԹՊՈՒԼ (6րդ եւ 7րդ դասարաններ)**

1. Արծրունի Ազգային Վարժարան
2. Մարի Մանուկեան Կրթական Հաստատություն

3. Մխիթարեան Վարժարան
4. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատություն
5. Պաղչէճեան Վարժարան
6. Վիսենթե Լոփեսի Ազգային Վարժարան
7. Խրիմեան Վարժարան

**«ՉԱԼԵՆՈՐ» ՄՐՑԱՆԱԿ**


1. Վիսենթե Լոփեսի Ազգային Վարժարան (96 կէտ)
2. Արծրունի Ազգային Վարժարան (87 կէտ)
3. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Կրթական Հաստատություն (86 կէտ)
4. Մխիթարեան Վարժարան (65 կէտ)
5. Մարի Մանուկեան Կրթական Հաստատություն (43 կէտ)
6. Պաղչէճեան Վարժարան (36 կէտ)
7. Խրիմեան Վարժարան (8 կէտ)


**«ՅԱԿՈՐ ԵՒ ԱՇԽԵՆ»**

**ԹԻՖԼԵՔՈՒՆ-ՍԵՐԱԿՈՐԵԱՆ» ՄՐՑԱՆԱԿ**  
Վիսենթե Լոփեսի Ազգային Վարժարան

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)


# Saberatours Sevan Voyages




WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**  
Արմավիա

Photos: © Yarm Artusé-Bertrand, Ferre via du Ciel. Licence 075 960031 - Studio K&K 2007/2005


- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days




11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com



48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆԷՔ Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՐԶԱԴԱՇՏԻՆ ՄԷՉ

## Միլիանա Սասձեան ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄ

**Տ**արիներու ականջողութեան համաճայն, 2005ին եւս, Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի Ռամոն Մեխիայի մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ ականջողութիւն դարձած Սուրբ Պատարագը եւ մատաղօրհնէքը, ի յիշատակ Թուրքիոյ կողմէ 1915-1923 տարիներուն գործադրուած Հայկական Յեղասպանութեան:

Աւելի քան 900 ներկաներ պատուեցին մեր նահատակներուն յիշատակը: Ներկաներուն կարգին էին Հ.Մ.Ը.Մ.ի վարչականներ եւ անդամներ, արժանիքին հայ գաղութի գանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, հայկական լրատուական միջոցներ, հաստատութեան բարերարներ եւ «Արեւմուտքի Ակումբներու Միութիւն» տեղական կազմակերպութեան ներկայացուցիչներ:

Սուրբ Պատարագը մատուցանեց Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Արժանիքին եւ Զիլիի Թեմերու Առաջնորդ Գիսակ Արք. Մուրատեան: Երգեցողութիւնը կատարեց «Կոմիտաս» երգչախումբը, Մաքրուհի Էօլմէսէքեանի ղեկավարութեամբ:

Ապա, փակ մարզասրահի մէջ հրամցուեցաւ մատաղը, Հ.Մ.Ը.Մ.ի երիտասարդական յանձնախումբի, «Արարատ» սկաուտական խումբի եւ տիկնանց յանձնախումբին կողմէ, որոնք տքնաջան աշխատանք տարին գաղութային այս ձեռնարկին յաջողութեան համար:

Ձեռնարկին ընթացքին, ներկաները առիթը ունեցան լսելու Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Արմանտո Տիրատուրեանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Խոր-

խէ Գարամանուկեանի յուզիչ խօսքերը:

Գեղարուեստական բաժինով, փրոֆ. Մարիա Էպէքեան-Մոմճեան բոլորը տպաւորեց Հայկական Յեղասպանութիւնը ներկայացնող երեք բանաստեղծութիւններու ասմունքով: Ապա, Վիսենթէ Լոփէսի Ազգային Վարժարանի «Արեւազար» երգչախումբը, փրոֆ. Ռոսալպա Օննիկեան-Կարսիայի ղեկավարութեամբ, ներկայացուց չորս գեղեցիկ երգեր:

Հասաւ ձեռնարկին ամէնէն յուզիչ պահը, երբ Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղը պատուեց զոհողութեամբ եւ նուիրումով գործող այրերու եւ կիներու այն սերունդը, որ կառուցեց գաղութին հաստատութիւնները եւ աշխատեցաւ, որպէսզի անոնք ամուր մնան մինչեւ օրս: Առ այդ, յիշեալ սերունդը ներկայացնող Հ.Մ.Ը.Մ.ի անդամներ եւ անդամուհիներ, բոլորին տարիքը 80էն աւելի ըլլալով, գրաւեցին իրենց համար յատկապէս պատրաստուած սեղան մը: Անոնց կարգին կը գտնուէին երեք անդամուհիներ, որոնք վերապրողներ էին Հայկական Յեղասպանութեանէն - Լուսինէ Պէրէճիքեան-Խաչերեան, Կիլլա Ճիգմէճեան-Խարբուլիան եւ Սիրանոյշ Բարսեղեան-Թաղէոսեան: Մասնաճիւղի վարչութեան քարտուղար տղթ. Յակոբ Թապազեան այս առիթով յուզիչ խօսքեր արտասանեց, նաեւ՝ երեք վերապրողներու կեանքէն ներկայացնելով ապրումներ: Աւարտին, իւրաքանչիւրին յանձնուեցաւ ճերմակ վարդ մը՝ իբրեւ արտայայտութիւն մեր շնորհակալութեան հանդէպ բոլոր անոնց, որոնք բախտաւոր այս օրուան մեզ հասցուցին:

Այս ձեռով վերջ գտաւ Հայկական Յեղասպանութեան յիշատակման Սուրբ Պատարագը եւ մատաղօրհնէքը, որ Պուէնոս Այրէսի գաղութային ականջողական յիշատակումներէն մէկն է եւ ամէն տարի տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի մարզադաշտին մէջ:

## ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄ. Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՋԱՀՐ ԿԸ ՓՈԽԱՆՅՈՒԻ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻՆ

## Թղթակից ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՄ

«**Ո**մանք այս աշխարհէն կ'անցնին եւ գայն կը ձգեն այնպէս ինչպէս որ գտան: Սակայն ձեզի նման անձերը ժամանակ կը տրամադրեն յա-

տուկ եւ տարբեր ձեռով գործելու, մեր բոլորին համար օրինակ դառնալով»:

Անկասկած, այս խօսքը կ'ամփոփէ քոյր Նանսի Թաղէոսեանի եւ եղբայր Խաւէր Խաչատուրեանի տարած աշխատանքը Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի «Արարատ» սկաուտական խումբին մէջ: Երկուքն ալ Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին մաս կը կազմեն իրենց վեց տարեկան հասակին, կը դառնան արծ-

ւիկ եւ գայլիկ, իրենց ամբողջ կեանքին տեւողութեան մնայով սկառուտ: Կը մեծնան եւ անմոռանայի ապրումներ կ'ունենան, Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական շարժումին մէջ հոյակապ պահեր վայելելով: Օրինակ, երկուքը բախտը կ'ունենան 1994ին մասնակցելու Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ծրագրի Բանակումին, որ առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենայ հայրենիքի մէջ:

Տարիներու ընթացքին, քոյր Նանսի եւ եղբայր Խաւիէր կը գարգանան նաեւ իբրեւ գաղութի ղեկավարներ, գիտակցելով որ սկառուտութիւնը հիմնական միջոց մըն է կազմակերպական նպատակներու իրագործման համար, նաեւ՝ արժէքաւոր միջոց մըն է գաղութի ղեկավարներ պատրաստելու եւ մեր ազգային ինքնութիւնը փոխանցելու համար:

Այս նպատակները ուղեցոյց ունենալով, անոնք կը ծրագրեն փոփոխութիւններ կատարել... եւ անշո՛ւշտ կը յաջողին: Միասնաբար կ'աշխատին սկառուտական խումբի ղեկավարութեան հետ, հաստատելով տոկուն խումբ մը: Կը շեշտեն թէ՛ անձնական եւ թէ՛ կազմակերպական դաստիարակութեան կարեւորութիւնը, եւ առ այդ կը մասնակցին բազմաթիւ սեմինարներու եւ դասընթացներու, նկատի ունենալով սկառուտներու կարիքները:

Իւրաքանչիւր ծրագրի մէջ քոյրն ու եղբայրը կը գործադրեն Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»: Այսպէս, անոնք իրենք զիրենք կը փաստեն եւ ճամբայ կը բանան նաեւ ուրիշներու, նպատակ ունենալով «Արարատ»ի բո-

լոր անդամներուն առիթ տալ, որպէսզի ցոյց տան իրենց կարողութիւնը:

Շնորհիւ իրենց, սերնդափոխութիւնը եւս տեղի ունեցաւ բնական ձեւով: Արդարեւ, յատուկ հանդիսութեամբ մը կատարուեցաւ մասնաճիւղի ընդհանուր խմբապետի եւ փոխ խմբապետի փոփոխութիւնը: Եղբայր Յարութիւն Յովհաննէսեան, մասնաւորապէս հրաւիրուած ըլլալով իբրեւ սկառուտական նախկին ղեկավար, առաջնորդեց արարողութիւնը: Հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին սկառուտական խումբի անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի վարչականներ, նախկին ղեկավարներ, ծնողներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Առաջին հերթին, «Արարատ»ի իւրաքանչիւր խումբ քոյր Նանսիին եւ եղբայր Խաւիէրին յուշանուէրներ նուիրեց: Ապա, խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ատենապետ եղբայր Արմանո Տիրատուրեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Ծրջանային Վարչութեան ատենապետ եղբայր Խորխէ Գարամանուկեան:

Այնուհետեւ, քոյրեր Գարոլինա Խաչատուրեան եւ Սիլվանա Սաաճեան վերահաստատեցին իրենց սկառուտական երդումը, իբրեւ մասնաճիւղի ընդհանուր խմբապետուհի եւ փոխ խմբապետուհի, ըստ պատշաճի կատարելով պաշտօններու փոխանցման արարողութիւնը:



# Travel Ways - Egypt

## NILE CROCODILE CRUISES




**Incoming Tour Operator**  
**Hotel & Cruise Reservation**  
**Transportation**  
**Excursions**

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1  
 from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt  
 Tel: 02 2739400/500/600  
[www.travelways-egypt.com](http://www.travelways-egypt.com)  
[marketing@twaysegy.com](mailto:marketing@twaysegy.com)



# ՆՈՐ ԱՒԻՇ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱԼԷՊԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ

## Գեորգ Յակոբճեան ՀԱԼԷՊ

**Կ**իրակի, 25 Սեպտեմբեր 2005ի առաւօտուն, Հալէպի Ազիզիէ թաղամասը կը խայտար մօտաւոր 600 գայլիկ-արծուիկ, արի-արեւոյշ եւ երէց-պարմանուհիներու եռանդով: Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի սկառտական շարքերու միաւորները այդ Կիրակի միասնաբար պիտի անցընէին Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզի պասքէթի դաշտը, որ ներկայիս փակ մարզասրահի վերածուելու ընթացքին մէջն է: Անոնք պիտի մասնակցէին Սկառտ-Խորհուրդի կազմակերպած տողանցքին եւ աստիճանատուչութեան արարողութեան:



Յետ դրօշակի արարողութեան, իւրաքանչիւր միաւոր անցաւ տողանցքի պատրաստութեան, ու երբ Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղին շեփորախումբը իր ազգայնաշունչ նուազներով սկսաւ թնդացնել պասքէթի դաշտը, բոլորը պատրաստ էին ներկայացումի:

Գայլիկ-արծուիկները իրենց կթոտ, բայց եռանդուն, արի-արեւոյշները ինքնավստահ ու վճռական, իսկ երէցները խրոխտ ու համարձակ քայլերով կը տողանցէին եւ հպարտութիւն կ'առթէին նախ իրենց հոգիներուն, ապա՝ իրենց դիտող ներկաներուն:

Տողանցքէն ետք, «Հանգիստ-պատրաստ»ի պահուն, գայլիկին «Լաւագո՛յն», արիին «Պատրաստ» եւ երէցին «Մառաջո՛ղ» բարձրաձայն ու հուժկու կոչերը կու գային աւելի եւս փաստելու միասնակամ ու հանրանուէր աշխատանքին իմաստը:

Ապա, մասնաճիւղի խմբապետ եղբ. Վիգէն Գապագեան հրաւիրեց Հալէպի

մասնաճիւղի վարչութիւնն ու Սկառտ-Խորհուրդը, իրենց ներկայութեամբ կատարելու աստիճանատուչութիւնը: Իր խօսքին մէջ, եղբայրը աստիճանատուչութեան նպատակին անդրադառնալով, յայտնեց որ ան Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբան՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ի իրականացման միջոցներէն մէկն է:

Կարգը հասած էր աստիճանատուչութեան. սկառտական Բ. կարգի վկայեալ ու վարիչ առաջնորդ աստիճանի քննութիւններուն յաջողած 13 քոյր-եղբայրներ ստացան վարիչ առաջնորդի աստիճան: Ա. կարգի վկայեալ 26 քոյր-եղբայրներ ստացան փոխ խմբապետի աստիճան: Հարկ է նշել, թէ նախքան աստիճանատուչութիւնը, Սկառտ-Խորհուրդը կազմակերպած էր մասնագիտական հարցազրոյց՝ փոխ խմբապետի աստիճանի թեկնածու քոյր-եղբայրներուն հետ:

Աստիճանատուչութեան աւարտին, մասնաճիւղի ատենապետ եղբ. Կարպիս

Թովմասեան խօսք առնելով շնորհաւորեց աստիճան ստացող քոյր-եղբայրները եւ շեշտեց այն իրողութիւնը, թէ բարձրացումով յաւելեալ աշխատանքի, անշահախնդիր զոհաբերութեան եւ ծառայասիրութեան ոգին կ'արժեւորուի ու կը գօտեպնդուի իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ: Եղբ. Թովմասեան խօսքը աստիճանաւորներուն ուղղելով ըսաւ. «Հայեցի դաստիարակութեամբ ու Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութեամբ սերունդ պատրաստելու առաքելութիւնը ձեր ուսերուն պարտք կը դրուի այսօր: Պարտականութեան գիտակցութեամբ մօտեցէ՛ք ձեր աշխատանքին, որպէսզի լաւատեսութեամբ տոգորուած մեր հոգիները ապագային պարծանքով լեցուին»:

Շեփորախումբի եւ ներկաներու կողմէ «Մեր հայրենիք» քայլերգին կատարումով վերջ գտաւ արարողութիւնը:



# ՄԿԱՌՒՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՌՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ

Տ. Շ. ՄՈՆԹՐԷԱԼ

**Մ**ասնաճիւղի խմբապետները վերաորակաւորելու եւ անոնց գիտելիքներու պաշարը հարստացնելու նախանձախնդրութեամբ, Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ. - «Կամք» մասնաճիւղի Սկաուտ-Խորհուրդը Ուրբաթ 18 - Կիրակի 20 Նոյեմբեր 2005 եւօրեայ սեմինար մը կազմակերպեց քաղաքին հիւսիսը գտնուող Քիւնքորա բանակավայրին մէջ:

Ուրբաթ երեկոյ, մասնաճիւղին քոյրերն ու եղբայրները հասան բանակավայր եւ դիմաւորուեցան Սկաուտ-Խորհուրդի լման կազմին կողմէ: Ապա, կարճ փոխանցումներէ եւ իւրաքանչիւրը իր գոյքերը տեղաւորելէ ետք, սեմինարը սկսաւ իր աշխատանքներուն: Բացման խօսքով, Սկաուտ-Խորհուրդի ատենապետ եղբ. Լեոն Արապեան ողջունեց ներկաները եւ անդրադարձաւ սեմինարին ընթացքին, կարեւորութեամբ շեշտելով անոր անհրաժեշտութիւնը՝ սկաուտական կեանքին ներս:

Սեմինարին յայտագիրը ընդգրկեց երկու դասախօսութիւն.-

Ա.- «Խմբապետը եւ իր մօտեցումն



ու վարուելակերպը պգ տիկներուն հետ» - դասախօս՝ Վարդի Դանիէլեան (մանկավարժ-ընկերաբան):

Բ.- «Տարիքային փոփոխութեան եւ ընտանեկան ու ընկերային պայմաններու ներգործութիւնը պատանիին վարք ու բարքին վրայ» - դասախօս՝ Լիսա Լիպարեան (հոգեբոյժ):

Տեղի ունեցաւ նաեւ գրոյց-քննարկում մը՝ խմբապետները յուզող այժմէական հարցերու շուրջ: Կատարուեցան նաեւ՝

- Յառաջիկայ տարեշրջանի յայտագիրներու կազմակերպման, բարելաւման եւ գործադրութեան եղանակի պատրաստութիւն.
- Կարծիքներու փոխանակում եւ սկաուտական գիրքերու գործածութիւն:

Շաբաթ օր, սեմինարին միացան մասնաճիւղին սկաուտական աշխատանքներու պատասխանատու

եղբ. Վիգէն Պասմաճեան եւ ատենապետ եղբ. Տիրան Շահինեան: Օրուան յայտագրին աւարտին, մասնաճիւղի ատենապետ եղբ. Տիրան Շահինեան խօսք առնելով գնահատեց սեմինարին մասնակցողները եւ անոնց շինիչ քննարկումները, թելադրելով չբաւարարուիլ նման սեմինարներու մասնակցութեամբ, այլ՝ ջանալ գործադրել ձեռք բերուած գիտելիքները, սկաուտական աւելի առողջ շարքերու պատրաստութեան ի խնդիր:

Կիրակի կէսօրին աշխատանքները արդէն իսկ աւարտած էին եւ տեղի ունեցած էր սեմինարին ընդհանուր արժեւորումը:

Յաջող ընթացք եւ դաստիարակչական օգտաշատ յայտագիր ունեցող այս սեմինարը փակուեցաւ Կիրակի, 20 Նոյեմբերի յետմիջօրէին ժամը 2.30ին, «Յառաջ նահատակ» քայլերգով:



**ԲԱՆՏԱՒՈՐՈՒԱԾ**  
Տէր եւ տիկին  
Կարօ եւ Դանիա  
Տէմիրճեաններ  
բախտաւորուած են  
առջիկանէ մասն զաւակով՝  
**ԵՐՈՒԱՆԳ**



# Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՂԱՅԻՆ 35ՐԳ ՄԱՐԶԱԽԱԳԵՐԸ



Նահանգներէն Հ.Մ.Ը.Մ.ի Փաստենաչի եւ Կլէնտէյլի մասնաճիւղերը, Արեւելեան Միացեալ Նահանգներէն Փրովիտընսի եւ Տիթրոյթի մասնաճիւղերը, Անգլիոյ՝ Լոնտոնի մասնաճիւղը, Գանատայի Սէնթ Գաթրինզի, Համիլթընի, Մոնթրէալի եւ հիւրընկալ Թորոնթոյի մարզական խումբերը:

35րդ մարզախաղերը ընդգրկեցին տղոց եւ աղջկանց պասքէթպոլ եւ ներքին Ֆուլթպոլ, աղջկանց վոլիպոլ, տղոց ֆլոր հաքի, փինկ-փոնկ, ճատրակ եւ աթլէթիզմի մրցումներ: Այս տարի, առաջին անգամ ըլլալով, աղջկանց Ֆուլթպոլը եւ ճատրակը փորձառական շրջանի մը համար մաս կազմեցին խաղերուն եւ բաւական մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին իրենց շուրջ:

Երեք օրերու ընթացքին, եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ, մարզիկները մրցեցան իրարու հետ, իրարու դէմ, տիրանալու համար մրցանակներու, յաղ-

## Չարեհ Տէրվիշեան ԹՈՐՈՆԹՕ

**Հ**ՄԸՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Թորոնթոյի մասնաճիւղին

կազմակերպութեամբ, շրջանի միջմասնաճիւղային 35րդ մարզախաղերը տեղի ունեցան 25-27 Նոյեմբեր 2005ին, Թորոնթոյի մէջ, նախագահութեամբ՝ տէր եւ տիկ. Երուսանդ եւ Նայրի Շահինեաններու:

Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Արեւմտեան Միացեալ





Թանակի մետաղներու եւ բաժակներու: Մեծ էր խանդավառութիւնը եւ ոգեւորիչ, մանաւանդ երբ առաջին անգամ ըլլալով այս խաղերը տեղի կ'ունենային Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի սեփական մարզասրահին մէջ: Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերու մարզիկները եկած էին հեռաւոր

չրջաններէ՝ իրենց հետ բերելով մեծ խանդավառութիւն եւ կորով: Հ.Մ.Ը.Մ-ի կողմէ կազմակերպուող համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերը թէ բանակումները, ըլլան անոնք միջ-մասնաճիւղային թէ միջ-գաղութային, մարզախաղերու թէ սկաուտական բա-

նակումներու հովանիին տակ, սփիւռքեան օտար եւ հեռաւոր ափերուն կը հետապնդեն մէկ նպատակ՝ համախմբել նորահաս սերունդի զաւակները, մէկտեղել զանոնք քով-քովի, անոնց մէջ վերանորոգելով մէկ ազգի եւ հայրենիքի պատկանելիութիւնը:

*'Made from one single slice of natural Australian opal'*

# Classique

OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

*Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)*



Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի մարզասրահը 35րդ մարզախաղերով մասնաճիւղին պատմութեան մէջ բացաւ նոր էջ մը, որուն դերակատարները հանդիսացան 435 մարզիկ-մարզիկուհիներ:

Շաբաթ, 25 Նոյեմբերի երեկոյեան, Հայ Կեդրոնի սրահին մէջ, մարզախաղերուն առթիւ կազմակերպուեցաւ

Armstock, ուր Հ.Մ.Ը.Մ-ական երիտասարդական երեք նուագախումբեր փոխն ի փոխ հայերէն երգերով եւ շուրջպարերով, ինչպէս նաեւ օտար երգերով երիտասարդական հաճելի մթնոլորտ մը ստեղծեցին, խաղերուն մասնակից մարզիկներուն եւ երիտասարդներուն համար:



Կիրակի, 27 Նոյեմբեր 2005ի փակման հանդիսութենէն առաջ, հոժ բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ երէց տղոց պասքեթպոլի աւարտական մրցումը, որ իրարու դէմ հանեց Կլէնտէյի «Արարատ» եւ Թորոնթոյի խումբերը: Խաղը ընթացաւ եղբայրական բարձր ոգիով եւ աւարտեցաւ ի նպաստ Թորոնթոյի, որ արժանացաւ մրցաշարքի ախոյանութեան բաժակին:

Խաղի աւարտին, մարզախաղերու փակման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Թորոնթոյի մասնաճիւղի մարզասրահին մէջ, մասնակցութեամբ 435 մարզիկ-մարզիկուհիներու եւ աւելի քան 150 սկաուտներու եւ արենոյններու: Հանդիսութեան ներկայ էին Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովիւ՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեան, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հովիւ՝ Եղիա Ծ. Վրդ. Գիրէջեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ եղբ. Գրիգոր Շիթիլեան, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վիգէն Աբէլեան, Հ.Յ.Դ. «Ս. Թեօփրեան» Կոմիտէի ներկայացուցիչ Զոհրապ Թաթիկեան, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Սեդրակ Պուրսալեան եւ Շրջանային Վարչութեան անդամներ, միութիւններու ներկայացուցիչներ, վարչականներ եւ Հ.Մ.Ը.Մ-ի բազմաթիւ բարեկամներ:

Հանդիսութիւնը սկսաւ աւանդական տողանցքով, առաջնորդութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի մասնաճիւղի սկաուտական շեփորախումբին, որ իր

## ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

### ՊԱՍՔԵԹՊՈԼ

Երէց տղաք\*  
Երէց աղջիկներ  
Պատանի աղջիկներ  
Պատանի տղաք  
Փոքր աղջիկներ  
Փոքր տղաք

ԵՐԿՐՈՐԴ  
Կլէնտէյի «Արարատ»  
Թորոնթո  
Մոնթրէալ  
Մոնթրէալ  
Մոնթրէալ  
Մոնթրէալ

ԱՆՈՅԵԱՆ  
Թորոնթո  
Մոնթրէալ  
Թորոնթո  
Թորոնթո  
Թորոնթո

### ՖՈՒԹՊՈԼ

Երէց տղաք  
Պատանի տղաք  
Փոքր տղաք  
Աղջիկներ  
Վերթերաններ

ԵՐԿՐՈՐԴ  
Թորոնթո Ա.  
Մոնթրէալ  
Թորոնթո  
Մոնթրէալ Ա.  
Թորոնթո

ԱՆՈՅԵԱՆ  
Մոնթրէալ Ա.  
Թորոնթո  
Մոնթրէալ  
Թորոնթո  
Մոնթրէալ

### ՎՈԼԻՊՈԼ

Երէց աղջիկներ

ԵՐԿՐՈՐԴ  
Թորոնթո Բ.

ԱՆՈՅԵԱՆ  
Մոնթրէալ

### ՖԼՈՐ ՀԱՔԻ

Տղաք

ԵՐԿՐՈՐԴ  
Մոնթրէալ

ԱՆՈՅԵԱՆ  
Թորոնթո

### ՓԻՆԿ-ՓՈՆԿ

Տղաք

ԵՐԿՐՈՐԴ  
Արմէն Գալստեան  
(Թորոնթո)

ԱՆՈՅԵԱՆ  
Վ. Ղարախանեան  
(Թորոնթո)

### ՃԱՏՐԱԿ 10 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

Առաջին  
Երկրորդ  
Երրորդ

Ատոմ Թաշճեան  
Սարգիս Գլըպոյեան  
Էտվին Երէցեան

Թորոնթո  
Թորոնթո  
Թորոնթո

### ՃԱՏՐԱԿ 18 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ

Առաջին  
Երկրորդ  
Երրորդ

Արսէն Խաչերեան  
Տարօն Մարտիրոսեան  
Կարնի Թաթիկեան

Թորոնթո  
Թորոնթո  
Թորոնթո

\*Երէց՝ 18 տարեկանէն վեր, պատանի՝ 16-17 տարեկաններ, փոքր՝ 13-15 տարեկաններ:



ազգային եղանակներով թնդացուց մարզասրահը եւ խուովեց շատերուն սրտերը, հաճելի յուշեր վերանորոգելով Հայկպէն, Պէյրուսթէն, Աթէնքէն եւ Եգիպտոսէն:

Հանդիսութեան բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետ եղբ. Զարեհ Տէրվիշեան: Ապա, խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ

եղբ. Սեդրակ Պուրսալեան, Հ.Յ.Դ. «Ս. Թեհլիրեան» Կոմիտէի անդամ եղբ. Անդօ աչատուրեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան:

Մէջընդմէջ եղան մետալներու, բաժակներու եւ յուշանուէրներու բաշխում, յաղթական մարզիկներուն ու խումբերուն:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի «Պահպանիչ»ով եւ

«Յառաջնահատակ» քայլերգով, կատարողութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական շեփորախումբին եւ մասնակցութեամբ ներկաներուն:

Հանդիսութեան ավարտին, մասնակից խումբերը բաժնուեցան եւ վերադարձան իրենց քաղաքները, յառաջիկայ տարի կրկին տեսնուելու եւ իրարու հետ դարձեալ մրցելու ակնկալութեամբ:

**TOGETHER WE ARE STRONGER**  
**ՄԻԱՍԻՆ ԱԲԵԼԻ ԶՕՐԱԴՈՐ ԵՆՔ**

**ԱՖՀԻԼ**  **AFHIL**  
**Armenian Mutual Fund**  
 Tel. / Fax: 01 242556 - 242557



# Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի ՏԱՐԵԿԱՆ ՊԱՐԱՀԱՆՌԵՍԸ

Տ. Շ. ՄՈՆԹՐԷԱԼ

**Հ**ՄԸՄ - «Կամք»ի Մոնթրեալի վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 5 Նոյեմբեր 2005ին տեղի ունեցաւ մասնաճիւղին տարեկան պարահանդէսը, «Արմենիա» սրահին մէջ, ներկայութեամբ աւելի քան 460 համակիրներու եւ երիտասարդ ՀՄԸՄ-ականներու :



Եւ բոլոր պատասխանատուները՝ իրենց տարած անսակարկ աշխատանքին համար:

Երեկոն խանդավառեցին «1945» եւ «Նոր սերունդ» նուագախումբերը:

Այս ուրախ առիթով, ՀՄԸՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան կողմէ ՀՄԸՄ-ի Ծառայութեան շքանշանին արժանացան մասնաճիւղի եօթը անդամներ-- Ժիրայր Շատախցեան, Սիրվա Պուրսալեան,

Պարահանդէսը սկսաւ մասնաճիւղի ատենապետ եղբ. Տիրան Շահինեանի բարի գալուստի խօսքով: Ան բարձր գնահատեց ՀՄԸՄ-ի աւանդը հայապահպանման գործին մէջ եւ ներկայացուց մասնաճիւղին վարչութեան ծրագրած աշխատանքները, որոնց իրականացման համար ՀՄԸՄ-ը միշտ կարիքը ունի իր համակիրներուն աջակցութեան: Եղբայրը շնորհակարարեց պարահանդէսին կազմակերպիչ յանձնախումբը

Լեւոն Նաճարեան, Բաֆֆի Աբանեան, Նիկողոս Մարունեան, Գրիգոր Ապրազեան եւ Տիրան Շահինեան:

Հուսկ, խօսք առաւ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, որ շնորհակարարեց եւ բարձր գնահատեց պարգեւատրեալներուն միութեանական վաստակը:

Երեկոն շարունակուեցաւ նուագի եւ պարի ճոխ մթնոլորտի մէջ, մինչեւ առաւօտեան ժամերը:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՄԱՀԱՑԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Տ. Շ. ՄՈՆԹՐԷԱԼ

**Կ**իրակի, 13 Նոյեմբեր 2005ին, Մոնթրեալի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ մէջ Հոգեհանգստեան յատուկ պաշտօն կատարուեցաւ իրենց կեանքերը ՀՄԸՄ-ի ճամբով հայ ժողովուրդին նուիրաբերած հանգուցեալ ՀՄԸՄ-ականներու յիշատակին:

Օրուան պատարագիչ Գառնիկ Քհնյ. Գոյունեան իր քարոզին մէջ անդրադարձաւ ՀՄԸՄ-ի գնահատելի ծառայութիւններուն՝ հայ կեանքի զանազան բնագաւառներէն ներս եւ ՀՄԸՄ-ի դերին ու կարեւորութեան մեր ազգային կեանքէն ներս: Ան աւելցուց, որ «Այս մեծ միութիւնը եղաւ մարդակերտումի եւ հայակերտումի դարբնոց մը, ուրկէ ելան բարձրաստիճան եկեղեցականներ, ազգային ղեկավարներ, հայ ժողովուրդի արդար դատի պաշտպաններ եւ իրենց թանկագին կեանքերը զոհաբերող ան-



ձեր»։ Այս առիթով ան կոչ ուղղեց ներկաներուն անյապաղ իրենց զաւակները արձանագրելու Հ.Մ.Լ.Մ-ի շարքերուն։

Պատարագին ներկայ եղան Հ.Մ.Լ.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, Գանատայի Շրջանային Վարչութեան եւ Մոնթրէլի Հ.Մ.Լ.Մ.- «Կամք»-ի վարչութեան, սկաուտական եւ մարզական խորհուրդի անդամներ, արի-արենոյշներու խմբակ մը եւ մեծ թիւով հաւատաւոր միութենականներ։

Հոգեհանգիստէն առաջ, խաչ ու բուրվառով խորան բերեցաւ Հ.Մ.Լ.Մ.- «Կամք»-ի վարչութեան ծաղկեպսակը։ Ապա,

հանդիսաւոր կերպով կատարուեցաւ հոգեհանգիստը։

Եկեղեցական արարողութիւններէն ետք, ներկայ ժողովուրդը իր ցաւակցութիւնները յայտնեց Հ.Մ.Լ.Մ-ի պատասխանատուներուն։ Ապա, Հ.Մ.Լ.Մ-ականներ խմբովին այցելեցին Սէն Լորան գերեզմանատունը, ուր Հ.Մ.Լ.Մ.-«Կամք»-ի վարչութիւնը ծաղկեպսակ մը զետեղեց վերջերս մահացած վաստակաւոր Հ.Մ.Լ.Մ-ական եղբ. Արիս Քիւփէլեանի շիրիմին։

Այս առիթով, Քահանայ Հայրը արտասանեց հոգևոց մը եւ մեծապէս գնահատեց իր հանգուցեալ անդամներուն յիշատակը ոգեկոչելու Հ.Մ.Լ.Մ-ի քայլը։

*The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby*

# HOTEL

★ ★ ★

## PAVILLON MONCEAU

### PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com



# ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐՈՒՆ



## Տ. Շ. ՄՈՆԹՐԷԱԼ

**Հ**ՄԸՄ - «Կամք»ի Մոնթրեալի մասնաճյուղի ըսկառուները իրենց ընթացիկ աշխատանքներուն կողքին, Ուրբաթ, 21 Հոկտեմբեր 2005ին, այցելեցին Մանուար Գարթիէ-վիլի հանգստեան տունը, ուր կը գտնուին մեծ թիւով հայ տարեցիներ:

Իրենց այս գեղեցիկ նախաձեռնութեամբ, եղբայրներ Հանրի Արսլանեանի եւ Միհրան Խըշխըշեանի առաջնորդութեամբ, սկառուները հարգատ ջերմութեամբ ուրախութիւն եւ յուզում յառաջացուցին տարեցիներուն մօտ:

Առաջին բաժինով, սկառուները իրենց յատուկ ոճով երգեցին Գա-

նատայի, Հայաստանի եւ ՀՄԸՄ-ի քայլերգները, ապա՝ Սկառու-Խորհուրդի ատենապետ եղբ. Լեւոն Արապեան ծանօթացուց եղբայրները եւ բացատրեց այցելութեան նպատակը: Այնուհետեւ, սկառուները իրենց երգերով, զաւեշտներով եւ գեղարուեստական յայտագիրով խանդավառ ժամեր անցուցին տարեցիներուն հետ:

Այդ օր կարծէք բոլորը երիտասար-

դացած էին: Բոլորը իրենց աշխոյժ մասնակցութիւնը բերին ՀՄԸՄ-ի ըսկառուներուն պատրաստած յայտագիրին:

Այցելութեան շնորհիւ, սկառուները առիթը ունեցան ծանօթանալու նաեւ նախկին ՀՄԸՄ-ականերու եւ ՀՕՄուհիներու: Շուրջ երկու ժամ անոնք յատուկ գուրգուրանքով լսեցին միութեանական անցեալի կեանքին անոնց գանազան դրուագները:

Հանգստեան տան պատասխանատու՝ Վերա Պետիրեան շնորհակալութիւն յայտնեց ՀՄԸՄ-ի ըսկառուներուն ու պատասխանատուներուն եւ շեշտեց նման այցելութիւններու դրական ազդեցութիւնը տարեցիներուն վրայ:

Այցելութեան աւարտին, սկառուները ծերերուն կատարեցին սկառուական խանդավառ կանչեր եւ բաժնուեցան սրտի մեծ գոհունակութեամբ:



# ԵՂԲ. ԾՈՐԾ ՏԱՂԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գէորգ Գարամանուկեան  
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ



1979, Նիկոսիա. եղբ. Ծործ Տաղլեան (կեղրոնը, ձախէն չորրորդը) Հ.Մ.Ը.Մ.ի Բ. Պատգամաւորական Ժողովի նախագահ:

Տերեւաթափը կը շարունակուի...:  
Կեանքի պայմանները մեզ կը ստիպեն ընդունիլ անխուսափելին: Վերջ ի վերջոյ մեր կեանքը այս աշխարհին վրայ հանգրուան մըն է միայն, որուն կը յաջորդէ անդենականին մէջ նոր կեանք մը, աւելի պայծառ, աւելի փայլուն, աւելի հանգիստ, առանց մեր առօրեայ դժուարութիւններուն, ֆիզիքական եւ մտային տառապանքներուն:

Մէկուկէս տարի առաջ հողին յանձնեցինք վաստակաւոր այլ եղբայր մը՝ Պարգեւ Պարսամեանը, որ տասնեակ տարիներ ծառայած էր Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, մաս կազմելով Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան, ապա՝ ընտրուելով Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրոնական Վարչութեան անդամ:

Այժմ, կորուստը վաստակաւոր այլ եղբայր մըն է՝ Ճորճ Տաղլեանը, որ իր բովանդակ կեանքը ապրեցաւ իր պաշտելի միութեան համար, երիտասարդ տարիքէն մաս կազմելով

անոր մարզական շարքերուն:

Եղբ. Տաղլեան ծնած էր Հալէպ, 15 Յունուար 1925ին: Ան նախնական ուսումը կը ստանայ Կրթասիրաց վարժարանին մէջ: Երիտասարդ տարիքէն կը սկսի աշխատիլ, միաժամանակ անդամագրուելով Հ.Մ.Ը.Մ.ի եւ մաս կազմելով անոր պասքեթպոլի ու վոլիպոլի խումբերուն:

17 Սեպտեմբեր 1948ին, եղբ. Տաղլեան ընտանեօք կը փոխադրուի Արժանթին: Կը հաստատուի մօրեղբայրներուն քով եւ կ'աշխատի կօշիկի անոնց գործարանը: Ան անմիջապէս կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղին եւ մաս կը կազմէ պասքեթպոլի ու վոլիպոլի ներկայացուցչական խումբերուն:



Եղբ. Ծորճ Տաղլեան (աջէն շրդը): Կողքին՝ եղբ. Պարգեւ Պարսամեան, Շաւարշ Քհնյ. Մեհրապեան, Վարդգէս Տէր Կարապետեան եւ այլ եղբայրներ:

Փետրուար 1954ին, եղբ. Ծորճ կ'ամուսնանայ Զարման Տէմիրճեանի հետ եւ կը բախտաւորուի չորս զաւակներով (Մանուէլ, Մարիա Ռոսա, Էլիզապէթ, Սեսիլիա) եւ հինգ թոռներով, որոնք կը մեծնան ազգային շունչով կազմուած ընտանեկան միջնորդարի մէջ: Կ'անդամագրուին Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղին, մաս կը կազմեն սկստակական նորակազմ «Արարատ» խումբին եւ ապա՝ կը ստանձնեն վարչական պատասխանատուութիւններ:

Եղբ. Տաղլեան, Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի անդամակցութենէն քիչ ետք, 1951ին կը նշանակուի Ռամոս Մեխիայի մարզադաշտի մատակարար: Յաջորդ տարի ան կ'ընտրուի վարչութեան փոխ անդամ: 1953-1964 մաս կը կազմէ վարչութեան, ստանձնելով զանազան պաշտօններ: 1972-1981 ան դարձեալ մաս կը կազմէ վարչութեան, իբրեւ խորհրդական, փոխ գանձապահ եւ վերջին չորս տարին՝ իբրեւ ատենապետ:

1987ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ե. Պատգամաւորական Ժողովին, ան կ'ընտրուէր միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ: Կը մասնակցի 1989ին Լոնտոնի մէջ տեղի ունեցած միջ-դիւանական Բ. խորհրդաժողովին եւ 1991ին Աթէնքի մէջ գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի Զ. Պատգամաւորական Ժողովին:

Եղբ. Պարգեւ Պարսամեանի հետ, որ իր կարգին մաս կազմած է միութեան Կեդրոնական Վարչութեան (1983-1987), եղբ. Տաղեան պարգեւատրուած է Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով:

Վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ականը նաեւ հաւատաւոր Դաշնակցական էր: Ան երկար տարիներ մաս կազմած է Հ.Յ.Դ. Պուէնոս Այրէսի «Քրիստափոր» կոմիտէութեան, կարեւոր դեր ունենալով «Արմենիա» կեդրոնական ակումբի շինու-

թեան մէջ, ստանձնելով կնքահայրութիւնը Համագայինի գրադարանին, որ կը կրէ իր ընտանիքին անունը:

Իր կեանքի վերջին տարիներուն, առողջական պատճառներով, եղբ. Տաղեան հեռացած էր կուսակցական եւ վարչական գործերէ, սակայն ան կը շարունակէր օժանդակել կատարուած աշխատանքներու: Ան իր մահկանացուն կնքեց 17 Սեպտեմբեր 2005ին:

Թաղման արարողութեան, յանուն Հ.Յ.Դ. Պուէնոս Այրէսի «Քրիստափոր» կոմիտէին եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին, խօսք առաւ եղբ. Գէորգ Գարամանուկեան, իսկ Հ.Յ.Դ. Բիւրոյի անունով հրաժեշտի խօսք արտասանեց Մարիօ Նալպանտեան:

Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի եղբայր ծործ:

# ԵՂԲ. ԱՐԻՍ ՔՐԻՓԷԼԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եղբայր մը  
ՄՈՆԹՐԷԱԼ

# 15

Սեպտեմբեր 2005ին, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքէն յաւելէտ բաժնուեցաւ եղբ. Արիս Քրիփէլեանը: Ան իր մահկանացուն կնքեց 84 տարեկանին: Հակառակ իր տարիքին՝ յաւերժ երիտասարդ, առողջ, լուսամիտ, ազգային եւ միութենական իր պարտականութիւններուն զիտակից եղբոր մահը խոր սուգի մատնեց բոլորը:

Կարելի է երկար գրել եղբոր ազգային եւ միութենական համոզումներուն եւ իրազործումներուն մասին, իր անմառ տենչին՝ ազգին օգտակար ըլլալու, իր համոզիչ եւ բարի բնաւորութեան, իր եղբայրներուն, հարազատներուն, բարեկամներուն եւ ընկերներուն հանդէպ ունեցած սիրոյ մասին:

Եղբ. Արիս Քրիփէլեան ծնած էր Իսկէնտէրուն, 10 Դեկտեմբեր 1921ին: Ան նախնական ուսումը ստացած է Աղեքսանդրիոյ Հայկազեան ազգային վարժարանը եւ ապա յաճախած եւ ավարտած է տեղւոյն Ֆրանսական լիսէն:

Ուսումնական կեանքը բոլորած, նետուած է գործի ասպարէզ, ստանձնելով զանազան պատասխանատուութիւններ: Եղած է անօրէն Աղեքսանդրիոյ առեւտրական կարեւոր հաստատութեան մը մէջ, սիրուած եւ յարգուած է բոլորէն:



Մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու հոգեհանգիստէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութիւն մը կ'այցելէ եղբ. Արիս Քրիփէլեանի շիրիմը:

1928ին, հազիւ 7 տարեկան, իրեն նման բախտակիցներու հետ կ'անդամակցի «Կամբ» մարմնամարզական միութեան եւ հետզհետէ տարիներու ընթացքին միութիւնը կը դառնայ իր երկրորդ տունը: Միութենական իր կեանքին մէջ ան եղած է գայլիկ, սկաուտ, մարզիկ, մարզիչ եւ պատասխանատու:

1938ին, 17 տարեկան եղբ. Արիսը մարզական գետնի վրայ եղած է «Կամբ»ի փայլուն աստղերէն՝ Ֆուլթայոլի, պասքեթպոլի եւ աթլետիկ մէջ: Ան իր 5 եղբայրներուն՝ Նուպարի, Հրայրի, Վարուժի, Վազգէնի եւ Անդրանիկի հետ, հայ մար-



զական կեանքին սատարած է Եգիպտոսի, ի մասնաւորի՝ Աղեքսանդրիոյ մէջ:

Պասքեթպոլի մէջ, յիշատակելի է Քիւփէլեան 5 եղբայրներուն միաժամանակ ներկայութիւնը դաշտերու վրայ:

1950ական տարիներուն, եղբ. Արիս կը շարունակէ մասնակից դառնալ իր սիրելի միութեան վերելքին, ստանձնելով պասքեթպոլի մարզիչի պաշտօնը: Ան կը հաւատար, որ մարմնակրթանքը կարեւորագոյն միջոցներէն մէկն է՝ պատրաստելու համար տիպար քաղաքացիներ եւ առողջ ու կայտառ սերունդ մը, պատանիին ու երիտասարդին ջամբելով ազգային դաստիարակութիւն, միութենական հասկացողութիւն եւ յարգանք՝ երէցներու եւ նուիրապետական արժէքներու:

Բոլորէն սիրելի եղբ. Արիսը պասքեթպոլի ճամբով կարողացաւ իրականացնել այդ նպատակները: Ան իր շուրջ համախմբեց պատանիներ ու երիտասարդներ եւ ազգանուէր գոհողութեամբ, անհուն բարեացակամութեամբ եւ ազգին օգտակար ըլլալու հրամայականով պատրաստեց առողջ սերունդ մը, որ իր հպարտութեան աղբիւրը եղաւ մինչեւ վերջ:

1968ին, պայմաններու բերումով, եղբ. Արիս կը հաստատուի Գանատա՝ Մոնթրէալ քաղաքը: Կը նետուի իր գործի ասպարէզին մէջ եւ շուտով կը յաջողի ինքզինքը սիրցնել նոյնիսկ օտարներու:

Հ.Մ.Լ.Մ.-«Կամք»ի իբրեւ անդամ, եղբ. Արիս կը շարունակէ ազգին ծառայութիւնը, նիւթաբարոյսական իր ներդրումը բերելով Հայ Կեդրոնի յարկին տակ գործող բոլոր կազմակերպութիւններուն եւ միութիւններուն կարիքներուն: Երիտասարդ տարիքին զայն չճանչցողները առիթը ունեցան ուշ տարիքին ծանօթանալու անոր ազգանուէր նկարագրին, առողջ եւ ուղղամիտ մօտեցումին՝ միութենական հարցերու կապակցութեամբ, նոյնիսկ որոշ յամառ կեցուածքին՝ ազգի գերագոյն շահերը ի մտի ունենալով:

Հակառակ իր տարիքին, եղբայր Արիս կարողացաւ իր շուրջ համախմբել բոլոր տարիքի ազգայիններ, շնորհիւ իր մտածելակերպին եւ հարցերուն այժմէական մօտեցումին:

2001ին, Հ.Մ.Լ.Մ.-ի Գանատայի Շրջանային Վարչութիւնը գինք պարգեւատրեց «Ծառայութեան» շքանշանով: 2003ին, «Կամք» մարմնամարզական միութեան եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան 90ամեակին առիթով, Գանատայէն պատուիրակութիւն մը՝ վեթերան անդամներէ բաղկացած, գլխաւորութեամբ եղբ. Արիսին, մեկնեցաւ Աղեքսանդրիա, յարգանքի եւ երախտագիտութեան իր տուրքը մատուցելու 90ամեայ սիրելի Հ.Մ.Լ.Մ.-«Կամք» միութեան: Բոլորին, ի մասնաւորի եղբայր Արիսին ուրախութիւնը այդ օրերուն անսահման էր:

Եղբայր Արիս կը պատրաստուէր Հ.Մ.Լ.Մ.-«Կամք»ի 95ամեակի ձեռնարկին, 2007ին, երբ յանկարծ անողոք մահը եկաւ վերջ մը դնելու իր այնքան բեղուն կեանքին: Աղեքսանդրիոյ հին սերունդի ռահվիրաներու կողքին, եղբայրներ Կարոյին, Նշանին եւ Խմբապետ Վահանին հետ, ահա եղբ. Արիսն ալ յիշատակ եւ պատմութիւն դարձած է այլեւս:


Սիրելի եղբայր Արիս, Հ.Մ.Լ.Մ.-ական յաջորդական սերունդներու սրտերուն մէջ յիշատակը պիտի մնայ անթառամ եւ բարի օրինակը պիտի ըլլայ վարակիչ:

# ԵՂԲ. ՍԱՐԳԻՍ ԶԱՊԱՂՉՈՒՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Սզակիր մը  
ՀԱԼԷՊ

Որքան ալ կեանքի դաժան պայմանները մեզի հատեցուցած են մահուան գաղափարին հետ եւ դարձուցած նուազ զգացական, սակայն բոլորին սիրելի եղբ. Սարգիս Զապաղչուրեանի անվերադարձ մեկնումը այս աշխարհէն խոր կսկիծ յառաջացուց իր ծանօթներու հոգիներէն ներս:

Գաղթականութեան դժուարին տարիները ապրած, յետ-Եղեռնի առաջին սերունդի ներկայացուցիչ եղբ. Սարգիս ծնած էր 1920ին, Բալուի քրտաբնակ Կրպօ-Մեզրէ գիւղը:



մեծամասնութեամբ երկրի մէջ, սակայն հարկաւոր էր տոկալ ու գոյատեւել, ապահովել օրուան ապրուստը, պայքարիլ դժուարութիւններ

1929ին, Արեւմտահայաստանէն գաղթական վերջին կարաւանին հետ կը լքէ հայրենի հողը՝ ուղղուելու համար Հալէպ: Կարաւանը կը բաղկանայ 60-70 հազար հոգի հաշուող հայերէ: Նախ կ'ուղղուին Խարբերդ, ապա՝ Տիգրանակերտ, Մարտին եւ վերջապէս Հալէպ, ուր բաւական դժուարութեան հանդիպելէ ետք կը հաստատուին Զէյթուն Խան գաղթականայնը, 35 հոգինոց բազմադամ գերդաստանով մը, մէկ սենեակնոց տան մը մէջ:

Տնտեսական, ընկերային, հոգեբանական դժուարութիւններ ծայր կու տան. նոր միջավայր, նոր բարքեր, տարբեր մտածելաձեւ օտար երկրի մէջ, սակայն հարկաւոր էր տոկալ ու գոյատեւել, ապահովել օրուան ապրուստը, պայքարիլ դժուարութիւններ

րու դէմ, հայու վայել ազնիւ նկարագրով:

Մայրը՝ Մարիամ գինք կ'արձանագրէ Ազգ. Սահակեան վարժարանը, որ կը դառնայ փոքրիկն Սարգիսին ուսման եւ կրթութեան օճախը: Դպրոցը, սակայն, չի բաւարարեր ի ծնէ ուսումնասիր եւ ընթերցասէր պատանիին հետաքրքրութիւնները: Կը փնտռէ այլ միջավայրեր եւս՝ ուսման կողքին կերտելու համար առողջ միտք, ազնիւ հոգի, մաքուր նկարագիր:

1933ի Մարտ ամսուն իր առջեւ կը բացուին դռները Հ.Մ.-Ը.Մ.ի մեծ ընտանիքին, որ 1925էն ի վեր Հալէպի մէջ, Եղեռնէն ճողոպրած սերունդի զաւակներուն հոգիին մէջ կը կերտէր «առողջ միտք ու առողջ մարմին», «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանով:

Նոր հորիզոններ կը բացուին իր առջեւ: Զաւարեան վարժարանը իր սիրելի ժողովավայրն է, եղբ. Արսէն Դանիէլեանը՝ իր կնքահայր-խմբապետը: Ան մաս կը կազմէ սկստական «Առիւծ» խումբին, վարիչ ունենալով եղբ. Յարութիւն Տէր-վիշեանը:

Այնուհետեւ, եղբ. Սարգիս շուրջ քսան տարի մաս կը կազմէ Հ.Մ.-Ը.Մ.ի շարքերուն: Իբրեւ սկստու կը ստանձնէ «Արծիւ» խումբին պատասխանատուութիւնը: Նաեւ կ'ըլլայ անդամ սկստական պատուոյ առաջին Ֆուլթայոլի խումբին, որուն խմբապետն ալ կը դառնայ քանի մը տարի:

Կը մասնակցի շարք մը բանակումներու՝ Սուրիոյ, Պիթիասի, Իսկէնտէրունի եւ Պէյրութի մէջ: Իբրեւ մարզիկ, ան իր

մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.-Ը.Մ.ի ողիմպիական Յրդ խաղերուն, Պէյրութի մէջ, 1947ին, տալով իր լաւագոյնը, միշտ հաւատքով, միշտ խանդավառութեամբ:

Հ.Մ.-Ը.Մ.ի հանդէպ իր ունեցած յարգանքն ու հաւատամքը եղբ.Սարգիս արտայայտած է հետեւեալ ձեւով:-

«Սիրելի հայ ծնողք, գաւազի յանձնէ Հ.Մ.-Ը.Մ.ի սկստական շարքերուն՝ առանց վարանումի, առանց սակարկութան: Սկստուտութիւնը քեզի կը վերադարձնէ մաքուր նկարագրով, ազնիւ հոգիով, աշխատասեր եւ հնազանդ երիտասարդ մը»:

Նուիրեալ միութենականի, գորովալից ամուսինի եւ հոգատար հօր մը իր բարեմասնութիւններուն կողքին, եղբ.Սարգիս ունէր նաեւ գիրի ու գրականութեան հանդէպ սէր, որ կ'ամբողջանար իր ընթերցասիրութեամբ: Մինչեւ տասը տարի առաջ ան մնայուն եւ հազուագիւտ ընթերցող էր: Ամէն Կիրակի կ'այցելէր Զաւարեան գրադարան, գիրք մը ձեռքին՝ ուրախ ու ժպտուն կը վերադառնար տուն, հոգիին ու մտքին շաբթուան մը սնունդ ապահոված մարդու մը երջանկութեամբ:

Ընտանեկան յարկին տակ, կնոջը հետ ան իր տունը վերածեց փոքր ահումբի մը, իր զաւակներուն հոգիին մէջ սերմանելով ազգի, եկեղեցւոյ, հայրենիքի եւ մշակոյթի սէրը, մղելով զանոնք ծառայելու լաւին ու լաւագոյնին:

**With the compliments of**

**Restaurant Al-Mayass**


### ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ

1. Թոթենհամի հոլանտացի ֆուլբալդիստը:
2. Կազմարար, գիրք կազմող:
3. Մովսեսի քաղաքներէն - Սէգ, հպարտ:
4. Թրքահայ երկրագու շաբաթաթերթ - Գալա-րուն:
5. Մագերը թափած - Ձայնակից գիրեր - Այբուբե-նէն:
6. Դամասկեան սարը - Տիեզերական Ա. ժողովին գումարման վայրը - Ոչխար:
7. Եգիպտահայ օրաթերթ - Գալաթ:
8. Ցուցական ածական - Խիպ - Հատիկ:
9. Իգական օտար անուն - Նահատակ հայ բանաս-տեղծ:
10. Չուան - Չարութիւն - Անձնական դերանուն:
11. Ս. Փարաճանովի ֆիլմերէն (երկու բառ) - Կրկնուած բաղաձայններ:
12. Առանց աղի - Տարիք - Ցուցական ածական:
13. Ձայնանիչ - Ֆրանսական գետ - Ասպատակ:
14. Թղթախաղ մը - Պոլսահայ մեծատունի տրուած տիտղոս - Ցուցական ածական:
15. 1953ի Նոպէլեան գրականութեան մրցանակա-կիրին մականունը - Գլանաձեւ ընդունարան:
16. Դրկից տառեր - Իգական օտար անուն - Պա-րապ:
17. Պարոն - Սփռուած, տարածուած:
18. Շաղկապ - Հարցական դերանուն - Ես - Հայ-կական ամիսներու ԺԷ. օրը:
19. Ցուցակ - Ժանտահոտ ձարեղ կենդանի:
20. Իրերայաջորդ գիրեր - Նուրբ կտաւ - Շարու-նակ:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Արժանթինահայ թենիսիստ:
2. Միջոց - Չիլիէլ - Ունգ, մղեղ:
3. Աստուծոյ ստորոգելիներէն - Ժխտական պատասխան - Ստացական ածական:
4. Կենդանական սեռ - Մեր հին դրացիներէն - Մանչեսթր Ետնայթրաի հոլանտացի ֆուլթ-պոլիստը՝ Ռուտ վան:
5. Գոյականի հոլովներէն - Այբուբենէն - Տեղափոխուած տառեր:
6. Արամ Հայկազի երկերէն - Քայլ - Ժամանակի միաւոր:
7. Աղբիւր - Այբուբենէն - Ձայնանիչ - Պալթեան մայրաքաղաք:
8. Շէն - Բաֆֆին՝ իբրեւ գրագէտ - Ծնեբեկ:
9. Արիւնածուծ որդ - Այբուբենէն - Հաղորդեր - Գիրի մը դրացիները:
10. Չոյգ - Ամբողջովին - Ռուտ թենիսիստը՝ Միսքինա:
11. Ծառերու փտութիւն - Արգելական - Խիւս - Կրկնուած բաղաձայններ:
12. Տիրան Չրաքեանի գրչանունը - Նախամարդ - Աւազան - Սպիտակ համեմ:
13. Արական անուն - Ազատ արուեստներու պաշտպան ինը դիցուհիներ:
14. Մրափել - Երբեք, ամենեւին - Գեղեցիկ արքայ:
15. Փոքրացնող մասնիկ - Ողիմպիական քաղաք (1952) - Ուսուսիր:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



### ԹԻԻ 151 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ



# ԱՊՐԱՆՆԵՐ ԿՏՆՄԱՆ Հ.Բ.Ս.ԱԿԱՆԵՐ

